

ՄԱՀՈՒՄԸ ԵՐԱՆՈՒԹԻՒՆԸ



ՄԱՀՈՒԱՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆԸ

ՎԱՀԷ ՍՎԱԾԵԱՆ



ԹՈՐՈՆԹՕ
ՄԻԳ
- 2023 -

Ստանալու Համար դիմել՝

Հեղինակին

Vahe Sivaciyan
sivaciyan@sympatico.ca

**Ազատ զգացեք ձեր շրջանակին ղրկել, բազմացնել,
տպել ու բաժնել ձրիաբար:**

**Գրովթինը որեւէ փոփոխութեան էնթարկել կամ
տպագրուած օրինակները ծախել
բացարձակապէս արգիլուած է:**

Տպագրուած - Printed



THE RELIABLE PRINTER
PRINT ASSURED

15 – 2200 Markham Rd. Scarborough ON M1B2W4
Tel : 416-292-9394

STORE HOURS

MONDAY • FRIDAY: 9 AM – 5 PM



ՀՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Իմ խորին եւ սրտաբուխ շնորհակալութիւնները, ինչպէս նաեւ երախտագիտութեան զգացումները
կը յայտնեմ այս աշխատանքի պատրաստութեան
ընթացքին իրենց խորհուրդներով, ուղղումներով
եւ թելադրութիւններով գործս դիւրացնող
կարգ մը բարեկամներու:

Աղօթարար եմ, որ Աստուած իրենց պարգեւէ
առողջութիւն եւ արեւշատութիւն:

*

Հնորհակալութիւն կը յայտնեմ նաեւ բոլոր անոնց,
որոնք գիրքիս մէջ գործածուած լուսանկարները
հայթայթած են:

Աղօթարար եմ, որ Աստուծոյ օրհնութիւնները
անոնց վրայէն անպակաս ըլլայ:



ՀԵՂԻՆԱԿԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

<i>Լոյս 'ի Լուսոյ (Ա)</i>	2013
<i>Լոյս 'ի Լուսոյ «Բ» - Զարթօնք</i>	2015
<i>Լոյս 'ի Լուսոյ «Գ» -</i>	
<i>Տիեզերական Օրէնքները</i>	2017
<i>Խոկում</i>	2017
<i>Աւետարանի խորհուրդները - Հատոր Ա.</i>	
<i>Յիսուսի կեանքէն դրուագներ</i>	2018
<i>Աւետարանի խորհուրդները - Հատոր Բ.</i>	
<i>Յիսուսի առականները</i>	2018
<i>Աւետարանի խորհուրդները - Հատոր Գ.</i>	
<i>Յիսուս Քրիստոսի խօսքերը</i>	2020
<i>Աւետարանի խորհուրդները - Հատոր Դ.</i>	
<i>Յովհաննու և Թովմասի Աւետարանները</i>	2020
<i>Խորհրդածութիւններ</i>	2019
<i>«ԵՍ ԵՄ» - Ճանչնալ Աստուած</i>	2022
<i>Առաւօտ Լուսոյ</i>	2023
<i>Մահուան Երանութիւնը</i>	2023

ՈՏԱՆԱԲՈՐՆԵՐՈՒ ՀԱԻԱՔԱԾՈՅ

<i>Կենցաղալոյս</i>	2014
<i>Կենցաղալոյս (Ա, Բ, Գ)</i>	2019

*Հեղինակին բոլոր հրատարակութիւնները
մատչելի են համացանցային դրութեամբ:*

Զանոնք ներբերման հասցէ.

<http://www.luysiluso.ca>

Հեղինակին ե-փոստի հասցէն.

sivaciyan@sympatico.ca

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

*Աստուածաշունչէն գրաբար, աշխարհաբար,
նաեւ եկեղեցական ժամերգութիւններէ
մէջբերումները աւնուած են
հետեւեալ աղբիւրներէ.*

ՄԱՏՈՒՎԾԱՇՈՒՆԷՆՉ ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՄԱՅ

ԸՍՏ

**ՃՇԿԻՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՄՆԵԱՅ ՄԵՐՈՅ Դ ՀԵՎԵԱԿԱՆ
ՀԱՄԱՏԱՐՄԱՐՈՅՆ ԲԱԳՐԷ Դ ՀԱՅԿԱՄԱ ԲԱՐԲԱՌ
1805 Դ ՎԵՆԵՏԻԿ ՈՒՇՈՒ
Դ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԵՐՈՅՆ ՂԱՋԱՐՈՒ**



ՀԱՄԱՅԱՆՅԱՅԻՆ ՄԱՏՈՒՎԾԱՇՈՒՆԷՆՉ ՀԻՆ ԵՒՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԱՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ



ԱՂՕԹԱՄԱՏԵԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

**ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆ-Բ
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ-Բ**

ՇԱՐԱԿԱՆ-Բ

ԱՂՕԹ-Բ

ՏԱՂ-Բ

ՏՊԱՐԱՆ Յ. Գ. ՓԱԼԱԿԱՇԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

1929



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- Էջ
 3- Շնորհակալություն
 4- Հեղինակին Հրատարակությունները
 5- Ծանոթություն
 6- Բովանդակություն
 7- Կենսագրական
 8- Ծնողացս
 9- Ձօն Այտային
- 11- - Յառաջաբան
- 15- Ա - Մահուան պատճառները եւ ժամանակները
- 21- Բ - Ի՞նչ է մահը
- 35- - Մարդկային կեանքի Հանգրուանները
- 37- Գ - Մարդ ինչո՞ւ կը մեռնի
- 45- Դ - Ի՞նչ է երանությունը
- 63- Ե - Մահուան երանությունը
- 71- - Վերջաբան
- 79- Զ - Յաւերուածական
 81- - Շամանին չորս օրէքները
 84- - Անհաւաստն ու Հաւատաւորը




ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Հեղինակը ծնած է Կ. Պոլսոյ արուարձաններէն Գատրգիւղի մէջ: Նախակրթարանի ուսումը ստացած է տեղւոյն Արամեան-Ունճեան Ազգ. Վարժարանէն, իսկ միջնակարգի ուսումը՝ Սէն Ժօզէֆ ֆրանսական վարժարանէն: Ընտանեօք գաղթած են Թորոնթօ-Գանատա, ուր աւարտած է իր երկրորդական ուսումը: **1968**ին վկայուած է որպէս պսակաւոր գիտութեանց՝ Թորոնթոյի Համալսարանէն: Ապա հետեւած է բժշկական ճիւղին ու մասնագիտացած ներքին Հիւանդութեանց ու սրտաբանական մարզերու մէջ: Պաշտօնավարած է Թորոնթոյի Սէն Ժօզէֆ եւ Սէն Մայքըլ Հիւանդանոցներէն ներս: Ստացած է օգնական ուսուցչապետի տիտղոս իր շրջանաւարտ եղած Համալսարանէն: Դասախօսած է թէ՛ տեղական եւ թէ՛ միջազգային բեմերու վրայ: Յօդուածներ հրատարակած է՝ արդիւնք իր Հետազոտութիւններուն եւ **2007**ին ալ դասադիրք մը՝ սիրտը քննելու նոր Հասկացողութեամբ եւ ֆիզիքական նշաններուն բնախօսական եւ ախտաբնախօսական պատճառներու բացատրութեամբ:

Դպրութեան սկսած է Գատրգիւղի Ս. Թադաւոր Եկեղեցւոյ մէջ, եօթ տարեկանին, ապա, իր ծառայութիւնը շարունակած է Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ: Ուրար կրելու իրաւունք ստացած է Սիօն Արքեպիսկոպոսէն **1960**-ներու վերջերը: Սարկաւազ ձեռնադրուած է Սէնդ Գաղերինսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, ձեռամբ Արիս Եպս. Շիրվանեանի: Եկեղեցւոյ ծառայութիւնը շարունակած է Ս. Խաչ եւ յետոյ, դարձեալ, Ս. Երրորդութիւն Եկեղեցիներուն մէջ: Մաս կազմած է Թորոնթոյի Ս. Խաչ Ազգ. Ամենօրեայ Վարժարանի Հաստատման եւ անոր Հոգաբարձութեան, որոշ շրջան մըն ալ ատենապետելով այդ կազմին: Իր Հետաքրքիր եւ քննախնդիր բնութիւնը զինք մղած է Հետազոտութեան՝ ոչ միայն բժշկական, այլ նաեւ կրօնական գեանի վրայ:





1911-1985



1904-1994



ՍԻՐԵԼԻ ԾՆՈՂԱՅՍ
ԺԻՐԱՅԻՐ ԵՒ ԻՍԿՈՒՀԻ
ՍՎԱՃԵԱՆՆԵՐՈՒ
ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ
ՍԷՐ ԵՒ ՅԱՐԳԱՆՔ



«Դուք աղեղն եղաք, ուրիշ Ձեր շահագները իբր աղբորդ նետեր
դուրս արձակուե՞ծան:

Աղեղնախորը աւշոխն ձնաբոխն իր թրուածն ԿԵ ՏԵՍՆԷ ԵՒ Աղեղն
շօրախոր ԿԵՐՊՈՒԿ ԿԵ ԴՈՐԷ, ՈՐՊԷՍԺԻ ԻՐ ՆԵՏԵ ԱՐԱԳ ԵՒ ՀԵՄՈՒՆ
ԵՐԹԱՅ:

Աղեղնախորը Ձեռքն՝ Ձեր ԴՈՐԿՈՒՄԸ ՈՐԱՆՈՒԹԵԱՄԸ Եղա՛
Որքան ուր Ան սլաճոր նետն ԿԵ ՍԻՐԷ, ՆՈՅՆԵՐԱՆ ԱՆ ՀԱՍՏԱՏ Աղեղն:»

(յարաստուած - Խալիլ Ճիպրան-ի «Մարգարէն» գրքէն)



1955-2010



**ՄՈՂԱ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ԿՐ ԶՕՆԵՄ
ՎԱՂԱՄԵՌԻԿ ԿՈՂԱԿԻԺԻՄ՝
ԱՅՏԱ ՍՎԱՃԵԱՆ-Ի
ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ:**





ՄԱՀՐ

Հիւանդը, երբ զինք քննող բժիշկը կը պատրաստուէր
քննութեան սենեակէն դուրս ելլելու, ըսաւ.

«Բժիշկ, մեռնելէ շատ կը վախնամ, Հաճիս ըսէ, թէ միւս
կողմ ի՞նչ կայ»:

Բժիշկը, ամենայն Հանդարտութեամբ պատասխանեց.

«Չեմ գիտեր»:

«Դուն չե՞ս գիտեր» Հարց տուաւ Հիւանդը, «դուն որ
Հաւատացեալ մարդ ես եւ չես գիտեր ի՞նչ կայ Հոն»:

Երբ բժիշկը դրան բռնակը կը բռներ, դռան միւս կողմէն
ճանկոտուքի եւ ճգարու ձայներ իմացուեցան: Երբ դուռը
բացաւ, շուն մը մեծ ուրախութեամբ իր վրայ ցատքեց:

Բժիշկը Հիւանդին դառնարով ըսաւ. «Հոնս տեսա՞ր:

Մինչեւ այս պահը այս սենեակին մէջ չէր գտնուած եւ չէր
գիտեր, թէ Հոս ինչ կայ: Միակ գիտցածը իր տիրոջ այս
սենեակին մէջ գտնուիլն էր, որով երբ դուռը բացուեցաւ,
առանց վախու ներս ցատքեց: Ես ալ մահէն անդին ինչ
կայ չեմ գիտեր: Միայն մէկ բան գիտեմ...:

Գիտեմ որ Տէրս Հոն է: Այդ ալ բաւարար է»:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս գիրքին խորագիրը եղող նիւթին մասին գրելու գաղափարը բժշկական գրութիւն մը կարդալէս վերջ յղացայ: Իր ըրած պրպտումին արդիւնքները հրատարակող բժիշկին ներկայացուցած մահուան միջոցին տեղի ունեցած ուղեղային ելեկտրական շողարձակումներու թրթռացումի յաճախականութիւնները բաւական հետաքրքրական էին եւ զարմանք պատճառեցին: Այս արդիւնքներուն մասին երբ խորհրդածեցի, նկատի առնելով նաեւ ուրիշ մէկ հրատարակութիւն մը եւս որ նախորդ գիրքերէս մէկուն մէջ մէջբերած էի, անդրադարձայ թէ այս երկու գրութիւնները կը ստուգէին մահուան մասին գոյութիւն ունեցող որոշ հաւատալիքներ, որոնց փաստերը կը թուէին մեր գիտակցութենէն խուսափիլ:

Անտարակոյս, այս գիրքին ընդհանուր նիւթը մահն է: Հետեւաբար նաեւ որոշեցի գիրքը բաժնել հինգ զատ գլուխներու:

Առաջին գլուխին խորագիրն է «Մահուան պատճառները եւ ժամանակները»: Այս գլուխին մէջ պիտի ներկայացուի դարձեալ ուրիշ պրպտումի մը արդիւնքները ուր ներկայացուած են մահուան զանազան պատճառները եւ ամէն մի պատճառի հետեւանք եղած մահերուն միջակ տարիքները:

Երկրորդ գլուխին խորագիրն է «Ի՞նչ է մահը»: Այս գլուխին մէջ, որոշ եւ պատշաճ տեղեկութիւններ պիտի տրուին մահուան մասին, թէ ի՞նչ է մեր հասկացողութիւնը մահուան նկատմամբ եւ կամ ի՞նչ պէտք է ան ըլլայ:

Երրորդ գլուխին խորագիրն է «Մարդ ի՞նչու կը մեռնի»: Այս գլուխին մէջի տեղեկութիւնը նկատողութեան պիտի չառնէ առաջին գլուխին մէջի մահուան

Փիզիքական պատճառները, այլ պիտի կեդրոնանայ հոգեկանին վրայ:

Զորրորդ գլուխին խորագիրն է «Ի՞նչ է երանութիւնը»: Անտարակոյս մահուան երանութիւնը հասկնալէ առաջ պարտ ենք գիտնալ թէ ի՞նչ է երանութիւնը, որովհետեւ ընդհանուր առմամբ երանութիւնը համայն մարդկութեան ջախջախիչ մեծամասնութեան համար իրենց փորձառութեան եւ իրենց ենթագիտակցութեան մէջ գտնուող տեղեկութիւն մը չէ:

Այս գիրքին հինգերորդ եւ վերջին գլուխին խորագիրը բուն գիրքին խորագիրն է «Մահուան երանութիւնը»: Այս գլուխին մէջ պիտի ներկայացուի վերեւ յիշուած մահու միջոցին նկարուած ուղեղային գործառնութիւնները եւ հարկաւ պիտի տրուի նաեւ պատշաճ մեկնաբանութիւններ:

Գիրքս նաեւ ունի վերջաբան մը, որ նոր գրութիւն մը չէ եւ հրատարակուած էր նախորդ գիրքերէս «Լոյս 'ի Լուսոյ «Բ» - Զարթօնք» գիրքիս «Հիւանդութիւն Եւ Մահ» խորագրեալ Գ. գլխուն երկրորդ մասին մէջ: Յարմար նկատեցի նոյն գրութիւնը օգտագործել իբրեւ մահուան նիւթին ամփոփումը:

* * *

Բ

Գլուխ 2 - «Յաւելուածական» բաժնի մէջ տեղադրուած գրութիւնները իմա չեն, համացանցէն առնուած ոմանք հայերէնի թարգմանուած գրութիւններ են, անոնց մէկ մասին հեղինակները յայտնի չեն:





ՄԱՀՐ

Մեր մարդկային տեսանկիւնէ,
Ամէն ծնունդ կը վերջանայ մահով:
Ուրեմն մէկը միտին Հակագիրն է.
Վախճան մը, որ կը սպասենք վախով:

Ամէն անձի ճշմարիտ ելութիւնը
Իր Կեանքն է անխուսափելի,
Մահը չէ Կեանքի Հակագիրը,
Կեանքն է ներկայութիւնը Քրիստոսի:

Երբ մարմինը ծերացած ու յովնած
Չի ծառայեր Կեանքի նպատակին,
Կեանքը կը թողու մարմինը մեռած
Վերադառնալով Աստուածային ակին:

Պէտք է ուրախութեամբ դիմաւորենք
 Մահը մեր մարմինն պատրանքային:
 Ան վերջ մը չէ, որ տխրինք
 Եթէ չենք վատնած կեանքը աշխարհային:

Մեծ սոսկում պէտք է տայ
 Ոչ թէ մահը մեր մարմինն,
 Այլ ան մահը որ կը սպառնայ
 Կեանքին՝ ի մէջ ողջ մարմինն:

Կեանքը իր գիտակցութեամբ
 Մի պարգեւը Աստուածութեան,
 Պէտք է աճի արթնութեամբ
 Ծառայելու Աստուածայայտնութեան:

Իսկ երբ Կեանքը կը մահանայ
 Դեռ ողջ մարմնի մէջ աշխարհիկ,
 Եւ երբ մարմինն ալ վերջանայ,
 Այն ատեն է որ կը մեռնինք:

Վ.Ս.






Ա

ՄԱՀՈՒԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ
ԵՒ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ



ՄԱՀՈՒԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՒ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ


Այս գիրքին ընդհանուր նիւթը մասն է: Հետեւաբար պատշաճ կը նկատուի մահուան պատճառներուն մասին որոշ տեղեկութիւն մը տալ: Մարդկային տեսանկիւնէ այն ինչ որ մահ կը կոչենք, ընդհանուր առմամբ պատճառ մը կ'ունենայ: Պատճառները բազմաթիւ են, ոմանք բաւական հասարակ իսկ ուրիշներ անսովոր եւ հազուադիւր: Մեռեալներուն թիւերը եւ զանազան պատճառները կարելի են ներկայացնել ցուցագիծերով (graph – a bell curve) (իբրեւ օրինակ տես ցուցագիծ-Ա):



Ցուցագիծ-Ա

Կը թուի թէ մահուան միջին տարիքները կը տարբերին ըստ զանազան պատճառներուն: Անտարակոյս շատ մը մահուան պատճառներ կան որ մահը կը բերեն թէ երիտասարդներուն թէ ալ տարիքոտներուն, սակայն կը թուի թէ այդ պատճառներուն միջին տարիքները կը փոխուին: Ցուցագիծ-Ա ցոյց կու տայ մեռեալներու տարիքին եւ թիւին ցրուումը: Այն մահուան պատճառ-

ները, որոնք աւելի յաճախ կը պատահին միայն որոշ սահմանափակ տարիքներու, կը ներկայացնեն շատ աւելի նեղ ցուցագիծ մը, իսկ այն պատճառները որոնք հասարակաց են բոլոր տարիքներու՝ շատ աւելի լայն ցուցագիծ մը: Իբրեւ օրինակ տես զանազան՝ թէ նեղ եւ թէ լայն ցուցագիծերու օրինակներ (Պատկեր-Բ)



Պատկեր -Բ

Բժշ. Ճորճ Լանտպըրկի (Dr. George Lundberg) հրատարակած մահուան նկատմամբ ըրած ուսումնասիրութենէն որոշ մաս մը, որ Միացեալ Նահանգներու մէջ մահուան զանազան պատճառներուն վիճակագրութիւնը (statistics) կը ներկայացնէ, պատշաճ կը թուի հոս մէջբերել: Անտարակոյս աշխարհի զանազան վայրերու մէջ մահուան պատճառները կրնան իրարմէ շատ տարբեր ըլլալ եւ նաեւ նոյն պատճառներու հետեւանք մեռեալներուն թիւերն ալ շատ տարբեր ըլլալ: Ան գրած է, թէ մահուան միջին տարիքը ամերիկացի այր մարդոց համար 74.5 տարեկանն է, իսկ՝ կիներուն համար 80.2: Եթէ անհատին սեռը, ցեղը, գտնուած վայրը եւ տնտեսական վիճակը նկատողութեան չառնուին ընդհանուրին մահուան միջին տարիքը 73.7 տարեկանն է: Ան նաեւ կը գրէ թէ մարդուն թշնամին մահը չէ եւ մահը շատ բնական է: Բայց ան կը զրուցէ թէ մարդուն բուն թշնամին վաղահաս մահն (premature death) է, թշուառութիւնն է, տառապանքն է, անկարողութիւնն է, ցաւ քաշելն է եւ արուեստական միջոցներով մահուան գալուստը ուշացընելն է: Անտարակոյս որոշ անձեր վաղամեռիկ կ'ըլլան: Ըստ «Աշխարհի Առողջապահական Կազմակերպութեան» (WHO) 70 տարեկան հասնելէ աւելի առաջ

մեռնողը վաղամեռիկ կը նկատուի: Ան նաեւ ցաւ կը յայտնէ թէ Միացեալ Նահանգներու վաղամեռիկ մահերու թիւը, բաղդատմամբ ուրիշ յառաջդիմաց երկիրներու, շատ աւելի վատ է:

Հետեւեալը իր ներկայացուցած վաղամեռիկ մահերու պատճառներու ցանկ մըն է եւ այդ մեռեալներուն միջին տարիքները. Հրացանով գնդակահարուիլ - 28 տարեկան, ապօրինի «Ֆէնթանիլ»-ով մակադեղուիլ (overdose) - 35 տարեկան, ինքնաշարժի կամ որեւէ փոխադրիչի արկած - 40 տարեկան, զանազան ուրիշ ապօրինի բաղադրուածիւններով մակադեղուիլ - 46 տարեկան, ալքոլամոլութիւն (alcoholism) - 57 տարեկան, ծխախոտ ծխել - 66 տարեկան, լեարդի խանգար (cirrhosis) - 67 տարեկան, շաքարախտ - 67 տարեկան, քրօնիկ երիկամունքի հիւանդութիւն - 68 տարեկան, թոքի քաղցկեղ (cancer) - 71 տարեկան, որեւէ ուրիշ քաղցկեղ - 73 տարեկան, ուղեղային կաթուած - 73 տարեկան եւ սրտի տագնապ - 73 տարեկան: Միւս բոլոր մահուան պատճառներուն միջին տարիքները կը գերազանցեն 73.7 տարեկանը: Այդ պատճառները ընդհանուր առմամբ հետեւեալներն են. մտացրութիւն (Alzheimer's dementia), ուղեղային Փարքինսոնի հիւանդութիւն (Parkinson's disease), տենդախառն հարբուխ (influenza), թոքատապ (pneumonia) եւ նեխարկութիւն (sepsis): Անտարակոյս կան նաեւ զանազան ուրիշ մահուան պատճառներ, որոնք բաղդատմամբ վերեւ տրուած պատճառներուն շատ քիչ մարդոց մահուան պատճառ կ'ըլլան, հետեւաբար անոնք հոս չեն ներկայացուած: Իբրեւ օրինակ ծովու մէջ խեղդուիլ կամ վայրի անասունի մը կողմէ յօշոտուիլ:

Պատշաճ է նաեւ ներկայացնել Փոլին Անտէրսըն (Pauline Anderson)-ի գրութենէն մէկ-երկու տող: Ան Միացեալ Նահանգներու զանազան վայրերուն մէջ երեք գլխաւոր ցեղերու՝ սեւ, ճերմակ եւ սպանական,

«յուսահատիչ մահերու» (deaths of despair) թիւերը ուսումնասիրած եւ որոշած է : Հոս պիտի ներկայացուի միայն այն մահերուն պատճառները, որոնք ինք կը նկատէ «յուսահատիչ մահ» ըլլալ: Անոնք են. անձնասպանութիւն, ապօրինի բաղադրութիւններով մականդեղուիլ (drug overdose) եւ ալքոլամոլութիւն (alcoholism), ինչպէս նաեւ ասոր պատճառաւ ալ լեարդի խանգար (cirrhosis):

Այս տեղեկութիւնները կրնան հետաքրքրական ըլլալ բայց անոնք որեւէ կապակցութիւն չունին այս գիրքին բուն նպատակին հետ: Ինչպէս վերեւ գրուած էր, գիրքին ընդհանուր նիւթը մահն է, հետեւաբար պատշաճ էր որոշ տեղեկութիւն մը տալ նաեւ մահուան զանազան պատճառներուն նկատմամբ:

Կան նաեւ ոմանք, որոնք յանկարծամահ կ'ըլլան: Երբեմն անոնց մահուան պատճառը բնաւ յայտնի չըլլար: Անոնց մէկ մասը սրտի ելեկտրականութեան խանգարումի պատճառը կրնայ ըլլալ: Կան նաեւ շատ հազուադիւտ անհատներ, որոնք հոգեւոր կեանքի մէջ բաւական յառաջացած են եւ աւելի բարձր գիտակցութեան տէր դարձած, կ'ունենան որոշ չափով ճշմարտութեան եւ հետեւաբար երանութեան փորձառութիւնը: Անոնք յօժարաբար կը թողուն իրենց ֆիզիքական մարմինը ու կը «մեկնին»: Անտարակոյս, նման մարմինէ մեկնում անձնասպանութիւն չէ: Միթէ Յիսուս ալ խաչին վրայէն չըսա՞ւ.

«Եւ Կարդաց Յիսուս 'ի յայն մեծ' եւ

ասէ. Հայր՝ 'ի յեւս ի՞նչ աւարդեմ գահի

իմ» : (Գ.Լուկ. ԻԳ. 46)

«Յիսուս բարձրաձայն գոչեց. «Հայր՝ ձեռքերուդ մէջ կ'աւանդեմ իմ հոգիս»:



Բ

ԻՆՉ Է ՄԱՀՐ



ԻՆՉ Է ՄԱՀԸ

Մահը լաւ հասկնալու համար պարտ ենք նաեւ հասկնալ թէ ի՞նչ է կեանքը, ի՞նչ է կեանքին իմաստը եւ նպատակը: Անցեալին իմաստուն մարդու մը հարցուցած էին, թէ ի՞նչ է կեանքին իմաստը: Ան պատասխանեց. «կեանքը ինքնին իմաստ մը չունի, սակայն ան իմաստ մը ստեղծելու առիթը կու տայ»: Ուրեմն կեանքը առիթ մըն է այդ իմաստը ստեղծելու, հասկընալու, իւրացնելու եւ իրականացնելու: Դժբախտաբար համայն մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը այդ առիթը չեն ստեղծեր: Հետեւաբար իրենց կեանքն ալ անիմաստ կը մնայ: Եթէ կեանքը մարդուն համար անիմաստ ըլլայ, արդեօք պէտք է՞ զարմանք պատճառէ թէ մահը գոյութիւն ունի:

Մահուան ինչ ըլլալը լաւ հասկնալու համար պէտք է նախ գիտնանք թէ ի՞նչն է որ կը մեռնի: Հետեւաբար պարտ ենք նաեւ նախ գիտնալ թէ ի՞նչեր են որ «մարդ»-ը կը կազմեն: Անտարակոյս մարդ մարմին մը ունի եւ այդ բացարձակ իրողութիւն մը ըլլալ կը թուի, որովհետեւ զայն կը տեսնենք եւ կը շօշափենք: Մարդը նաեւ միտք մը ունի որ ընդհանուր առմամբ կը գործէ մարմինն ֆիզիքական ուղեղին միջոցաւ եւ ինչպէս նաեւ «սրտին» (ճառագայթաձեւ ջղահիւսքի) (solar plexus) միջոցաւ: Ուղեղայինը տեղի կու տայ խորհուրդներու ու քիչ թէ շատ իմացականութեան, իսկ սրտինը՝ զգացումներու: Մարդը նաեւ ունի անհատականութիւն մը, որ անասունները չունին: Ի՞նչ է մարդուն անհատականութիւնը: Ծննդոց գիրքին մէջ կը կարդանք.

«Եւ սփեղծ Տէր Աստուած զմարդն Ընդ

յերկրէ. Եւ փշեաց յերեսս նորա շունչ

կենդանի, Եւ եղեւ մարդն յագի կենդանի»: :

(Ծննդոց Բ: 7)

«Տէր Աստուած գետնի Հողէն ձեւակերպեց մարդը՝ անոր ունեւերէն կեանքի շունչ փչեց. եւ մարդը ապրող անձ եղաւ»:

Տարբեր թարգմանութեան մը մէջ նոյն համարը թարգմանուած է հետեւեալ ձեւով:

«Տէր Աստուած գետնին Հողէն շինեց մարդը եւ անոր ունեւերէն կենդանութեան շունչ փչեց ու մարդը կենդանի Հողի եղաւ»:

Բայց գրաբարը «Հողի» չի գրեր՝ այլ «ուգի»:
«Եբրայերէնի մէջ «շունչ» բառին համար «նէֆ» բառը գործածուած է, որ երկու իմաստ ունի. «շունչ» եւ «անհատականութիւն»:
Միւս բոլոր կենդանի արարածները, միայն մարդ արարածին տրուած, յաւիտենական կեանքի մը անհատականութեան գիտակցութիւնը չունին:

Ուրեմն ի՞նչ է մարդուն անհատականութիւնը: Ան Աստուծմէ բղխած յաւելեալ զօրութիւն մըն է մարդուն տրուած: Այդ զօրութիւնը փոխաբերաբար ներկայացւած է իբրեւ Լուսաբեր հրեշտակը: «Լուսաբեր» անուան իմաստը. «Լոյսը բերող» կը նշանակէ: Ուրեմն մարդուն անհատականութիւնն է, որ պէտք է իմաստաւորէ իր կեանքը եւ այդ իմաստը ծառայել է Աստուածայայտնութեան (այն ինչ որ Յիսուս ըրաւ եւ մեզի ալ սորվեցուց յաջողելու միջոցը), որ նպատակն է ընդհանուր ստեղծագործութեան: Բայց ի՞նչ է այն «Լոյսը» որ մարդ իր անհատականութեան ունեցած ազատ կամքով պարտ է իր մէջ ի յայտ բերել: Այս հարցումին պատասխանը բացայայտ պիտի ըլլայ ստորեւ: Այս յաւելեալ զօրութիւնը նաեւ մաս կը կազմէ մարդուն զօրութեան մարմնին: Շատ լաւ գիտենք թէ ստեղծագործութեան մէջ ամէն ինչ երկրութեան ենթակայ է: Նոյնիսկ երբ առաջին նիւթի մասնիկը զօրութենէ յառաջ եկաւ, անոր հետ միասին նաեւ յառաջ եկաւ հականիւթը: Հետեւաբար, մարդուն մարմինը երկու տեսակ է. արու եւ էգ: Միտքը

ունի երկու բեւեռներ մին կը գործէ ուղեղի միջոցաւ, իսկ միւսը՝ սրտի: Հետեւաբար մարդուն անհատականութիւնն ալ ունի երկու բեւեռներ. մին դրական իսկ միւսն ալ ժխտական: Ճիշդ ասոր համար վերեւի Մենդոց գիրքէն եղած մէջբերումը ներկայացուած է երեք գատ ձեւերով: Մին կ'ըսէ «անձ», որ կը ներկայացնէ ժխտական բեւեռը՝ մարդուն «Ես»-ը: Գրաբար մէջբերումին մէջ գրուած է «ոգի», որ կը ներկայացնէ դրական բեւեռը հոգիին հետ: Աշխարհաբար երկրորդ թարգմանութիւնը կը գրէ «հոգի» որ արդիւնք է սխալ հասկացողութեան եւ հետեւաբար սխալ ալ թարգմանութեան: «Ես»-ը մարդուն կու տայ իր ինքնութիւնը: Ս. Գիրքին մէջ գրուած Լուսաբեր հրեշտակի ըմբոստութիւնը, որ ուզեց Աստուծոյ գահը նստիլ, մարդուն իր «Ես»-ին կողմէ կառավարուելը կը ներկայացնէ: Ոչ մարդուն մարմինը, ոչ անոր միտքը եւ ոչ ալ անոր անհատականութիւնը կարողութիւնը ունին մարդուն կեանք տալու, բայց շատ կարեւոր ազդակներ են որպէսզի ողջ մարդը իր կեանքը իմաստաւորէ: Եթէ մարդուն կեանքը ինչպէս նաեւ գիտակցութիւնը այս երեքէն չեն գար, ուրեմն ի՞նչն է, որ մարդը ողջ ապրող՝ մարմնին համար կեանք եւ մտքին համար ալ գիտակցութիւն եւ իմացականութիւն ունեցող, էակ մը կ'ընէ: Այդ մարդուն հոգին է: Ան մարդուն մէջ Աստուծոյ Որդւոյն՝ Քրիստոսի ներկայութիւնն է: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եմ կեանքը», ինչպէս նաեւ «Ես եմ աշխարհի լոյսը»: Լոյսը ամէն ինչ տեսանելի կ'ընէ, հետեւաբար Քրիստոսի ըսած «լոյս»-ը մարդուն գիտակցութեան համար է, որ մարդ, իր մարմնին (ուղեղին) միջոցաւ, զայն նուազ քանակով սահմանափակուած կը յայտնաբերէ եւ ինք ալ «ամէն ինչի» սահմանափակ ձեւով գիտակից կ'ըլլայ: Քրիստոս նաեւ ըսած է. «Ես եմ ճշմարտութիւնը»: Մենք ալ յաճախ կը կրկնենք.

«Աստուած միակ ճշմարտութիւնն է», բայց կը թուի թէ մենք մեր հաւատացածին եւ ըսածին բուն իմաստը չենք հասկցած եւ միայն թուրքերի նման յաճախ կը կրկնենք: Եթէ միակ ճշմարտութիւնը Աստուած է, ուրեմն Աստուծոյ զատ ամէն ինչ պատրանքային երազ մըն է: Միթէ Քրիստոս նաեւ չէ՞ ըսած:

Ես եմ որք՝ եւ որքն ո՛րեւոր Լաստոսաւ է յիս՝

Եւ ես ՚ի նա՛, նա՛ քերէ պորոշ յոյժ. զի առա՛նց իմ

ո՛չնչ կարէի առնել: (Յովհաննէս ԺԵ:5)

Ես որթատունկն եմ, եւ դուք ճիւղերն էք. ան որ իմ մէջս կը մնայ, ու ես՝ անոր մէջ, անիկա՛ չատ պտուղ պիտի բերէ, որովհետեւ առանց ինծի ոչինչ կրնաք ընել:

Ուրեմն ամէն ինչ՝ այն բոլոր զանազանութիւնները, որոնք կը տեսնենք, կը շօշափենք պէտք է բոլորն ալ՝ նիւթ, բոյս, անասուն ու ամէն մարդ, Քրիստոսի զանազան արտայայտութիւնները ըլլան, քանզի միայն Աստուած ճշմարիտ է: Քրիստոս ընդհանուր որթատունկը՝ ստեղծագործութիւնն է իսկ ամէն ուրիշ ինչ՝ միայն ճիւղերը: Ուրեմն ամէն անհատի ճշմարիտ էութիւնը իր Հոգին՝ Քրիստոսն է: Հետեւաբար ամէն անհատ ալ Աստուծոյ զաւակն է: Ս. Գիրքին մէջ ալ նոյնը չէ՞ գրուած:

Եթէ ըլլան անձեր, որոնք կը խորհին թէ վերեւ գրուածները պարզապէս երեւակայութեան մը արտայայտութիւններն են, յաջորդաբար մէջբերուած Ս. Գրային համարները կրնան օգտագործել ստուգելու համար գրուածներուն ճշգրտութիւնը:

«Պատասխանի եր նոցա Յիսուս. Ո՞չ յօրէնան

չէր Գրեալ եւ ասացի թէ ասորո՛ւմ է իցէի»:

(Յովհաննէս Ժ:34)

«Յիսուս պատասխանեց անոնց. «Միթէ ձեր Օրէնքին մէջ գրուած չէ՞. Ես ըսի. Դուք աստուածներ էք»»:

«Ես ասացի թե ասոր-աստի իցե՛վ, Կամ որ-
դի՛վ Բարձրելոյ ամենե՛վեան» : (Սաղմոս 2Է:6)

«Ես ըսի. «Դուք աստուածներ էք. Դուք բոլորդ
Ամենաբարձրին որդիներն էք»» : (Սաղմոս 2Բ:6)

«Նոյն ինձն Ընդին զԿայե Ընդ-ոյ» մե-
րում, եթե եմ՛ ինձն որդի՛վ. ասա եւ ժա-
ռանգի՛վ. ժառանգի՛վ Ասոր-ժոյ՝ եւ ժա-
ռանգակիցի՛ Քրիստոսի՛ » : (Հոգեմայեցեա Ը:16-17)

«Նոյնինքն Հոգին զԿայութիւն կու տայ մեր Հոգիին
Հետ՝ թէ մենք Աստուծոյ զաւակներն ենք. Եւ եթէ
զաւակներ՝ ուրեմն՝ ժառանգորդներ՝ Աստուծոյ
ժառանգորդներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ՝ ... » :

«Տե՛սէ՛վ՝ որդիսի՛ սեր շնորհեաց մեզ
Ըայր, զի որդի՛վ Ասոր-ժոյ կոչեացո՛ւ
մե՛վ» : (Լ. Յովհաննոս Գ:1)

«Տեսէ՛ք թէ Հայրը ինչպիսի՛ սեր շնորհեց մեզի,
որպէսզի մենք Աստուծոյ զաւակներ կոչուինք. ...» :

«Ո՞չ գիտե՛վ եթե Կաճար է՛վ Ասոր-ժոյ,
եւ Ընդի Ասոր-ժոյ Բնակեալ է 'ի յեջ» :
(Լ. Կորնթացի Գ:16)

«Զէ՛ք գիտեր թէ Աստուծոյ տաճար էք դուք եւ
Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի» :

«Լոյս Տեարն շոնշ մարդկան, ... » :
(Լուսնաց Ի:27)

«Մարդուն ներշնչումը Տերօջը ճրագն է. ...» :

«Մարդուն Հոգին Տերօջը Լոյսն է» :²

«... եւ Ընդին է որ զԿայե, զի Ընդին իսկ
է ճշմարտութիւն» : (Լ. Յովհաննոս Ե:6)

«... ու Հոգին է, որ կը զԿայե, որովհետեւ Հոգին
ճշմարտութիւնն է» :

«Նոյն՝ կեանք էր, եւ կեանքն էր լոյս»

մարդկան» : (Յովհաննոս Լ:4)

«Կեանքը անով էր ու կեանքը մարդոց լոյսն էր»:

«Լսարոսա՞ծ լոյս է» : (Լ. Թոմաս Յովհաննոս Լ:5)

«Աստուած լոյս է»:

«...Ե՛ւ եմ լոյս աշխարհի. որ Գայ պննի

իմ՝ ընդ խաւար մի՛ Գնասցէ. այլ ընկալցի

պլոյսն կենաց» : (Յովհաննոս Ը:12)

« ...Ես եմ աշխարհի լոյսը. ան որ իմ ետեւէս կու գայ, խաւարի մէջ պիտի չքալէ , Հապա կենաց լոյսը պիտի ունենայ»:

«Դո՛ւք էի լոյս աշխարհի. ... եւ ո՛չ

լուսանէն ճրագ՝ եւ դնէն ընդ Գրոսանաւ,

այլ ՚ի վերայ աշրանակի. եւ լոյս Գայ

ամենեցոն՝ որ ՚ի Գանն իցեն : Լյնալէս

լուսաւորեացէ լոյս յեր առաջի մարդկան,

որպէսպիսի Գեացեն պարթա յեր Բարիս, եւ

Փառաւորեացեն պահար յեր որ յերկնն է » :

(Մարգարէի Ե:14-16)

«Դո՛ք էք աշխարհի լոյսը. ... Ու ճրագը չեն վառեր եւ դներ գրուանի տակ, Հապա աշտանակի վրայ որ լոյս տայ բոլոր տանը մէջ եղողներուն: Այնպէս թող լուսաւորուի ձեր լոյսը մարդոց առջեւ, որ տեսնեն ձեր բարի գործքերը ու փառաւորեն ձեր Հայրը որ երկինքն է»:

«Ծագեաց ՚ի խաւարի լոյս ուղղոց ,»

(Սաղմոսաց ՃԺԷ:4)

«Խաւարին մէջ լոյս կը ծագի ուղիղներուն»:(Սաղմոսաց ՃԺԲ:4)

«Ճանապարհէ՛ արդարոց որպէս լոյս Ժագեն

առաջնորդեն է- լոսասորեն, մինչե-
րի-ն լոսասորեացի» : (Լուսկայ Դ:18)

«Բայց արդարներուն ճամբան ծագող լոյսի պէս է, Որ
երթալով կը լուսաւորուի, մինչեւ կատարեալ օր
ըլլայ»:

«...արի որ ննջեալ, է- կանգնեա՛յ 'ի
մեռելոց, է- լոսասորեացի պէ՛տեզ
Քրիստոս» : (Լուսկայի Ե:14)

« ...Արթընցիր, դուն որ կը քնանաս եւ կանգնէ
մեռելներէն ու Քրիստոս քեզի լոյս պիտի տայ»:

Վերջին չորս մէջբերումները ցոյց կու տան թէ
հակառակ որ մարդուն ճշմարիտ էութիւնը Քրիստոսը՝
այդ Լոյսն է, կարելի է, որ մարդ իր կենցաղով խաբանէ
այդ լոյսին յայտնութիւնը իր մէջ:

Ուրեմն, վերեւ տրուած տեղեկութենէն վերջ, ի՞նչ
է մահը: Զարմանալիօրէն հայերէն լեզուի մէջ, «մահ»
բառը իր մէջ կը պարունակէ իր բացատրութիւնը:
«Մահ» բառը կազմուած է երեք տառերէ. «մ», «ա» եւ
«հ»: Այս երեք տառերը երեք զատ բառերու առաջին
տառերն են եւ այդ երեք բառերը կը ներկայացնեն
մահուան ինչ ըլլալը: Այդ բառերն են. «Մարմին»,
«Առանց», «Հոգիի»: Հետեւաբար մահը կը թուի
մարմինն մահը ըլլալ երբ հոգին զայն կը թողու եւ կը
հեռանայ: Մարդուն մարմինը հողէն եկած է եւ պարտ է
նաեւ ի վերջոյ հողին վերադառնալ: Միթէ մարդուն
մարմինը իր կերածներուն հետեւանք չէ՞՞՞ աճած: Նոյն-
իսկ նոր ծնող մարմինը, իր մայրը զայն աճեցուցած է
կերած ուտելիքներով, որոնք բոլորն ալ հողէն եկած են,
այսինքն՝ բոյսերէ եւ անասունի միսէ որ դարձեալ
աճած է բոյս ուտելով: Հետեւեալ Ս. Գրային համար-
ները կը ստուգեն այս իրողութիւնը: Այն ինչ որ մար-
դուն մարմին կը պատահի բնաւ տարբեր չէ անասունի

մը մարմինն պատահածէն:

«Սակայն եւ 'ի մէջ նոցա պարաւար է որդեոց մարդկան: Եւ պարաւար է անասնոց, եւ պարաւար յամենեան 'ի նոցա: Որպէս մահ սորա՝ նոյնպէս եւ մահ նորա: Եւ շոնշ է յամենեան: Եւ զի՞նչ ասաւելութիւն եղեւ մարդոյ քան զանասնոյ, եւ ոշինշ. զի ամենայն ինչ ընդոնայն է: Ամենայն 'ի մի ցեղի երթայ. ամենայն եղեւ 'ի Հոգոյ, եւ ամենայն դասայ 'ի Հոգ:» (Ժողովող Գ: 19-20)

«Արդարեւ ինչ որ մարդոց որդիներուն կը պատահի անասուններուն ալ կը պատահի. Նոյն բանը կը պատահի անոնց: Ինչպէս մէկը կը մեռնի, այնպէս ալ միւսն կը մեռնի: Բոլորը նոյն շունչը ունին: Մարդը անասունէն զերազանց չէ, Որովհետեւ ամէն ինչ ունայնութիւն է: Բոլորը նոյն տեղը կ'երթան: Ամէն ինչ Հողէն եղաւ եւ ամէն ինչ Հողին կը վերադառնայ»:

«Եւ դարձցի Հոգն յերկիր որպէս եւ Էրն, եւ Հոգին դարձցի աս Լսարոսաթ որ Եր զնա»: (Ժողովող ԺԲ:7)

«Այն ատեն Հողը գետինը պիտի վերադառնայ՝ ինչպէս որ առաջ Հոն էր, Ու Հոգին Աստուծոյ պիտի վերադառնայ, որ զայն տուաւ»:

Տարակոյս չկայ թէ մարդուն մարմինը մահկանացու է: Բայց ըստ վերջին մէջբերումին կը թուի թէ մարդուն հոգին անմահ է: Եթէ մարդուն հոգին Քրիստոսի ներկայութիւնն է իր մէջ, արդեօք կարելի է՞ որ Աստուած մեռնի: Հետեւաբար մարդ ինչո՞ւ վախնայ

մահէն: Դժբախտաբար համայն մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը մահէն կը վախնայ: Հետեւաբար, իր կեանքին նկատմամբ մարդուն հասկացողութեան մէջ հիմնական սխալ մը պէտք է ըլլայ: Միթէ ամէն գիշեր խորունկ քունի մէջ մարդ աշխարհին «մեռած» չէ՞: Նոյնիսկ կ'ըսուի, թէ խորունկ քունի մէջ մարդուն ոգին մարմինը կը թողու եւ լոյսի արագութեամբ ճամբորդելով ուրիշ «վայրեր» կ'երթայ փորձառութիւններ կ'ունենայ եւ յետոյ ետ իր մարմինն կը վերադառնայ: Ուրեմն ի՞նչ է մահը: Ինչո՞ւ խորունկ քունի մէջ ոգին ետ մարմին կը վերադառնայ բայց երբ «մահ» ըլլայ չի՞ վերադառնար:

«Մինչէւ Կորժանեալ իցէ լար արձառոյն,
Եւ խորրասկեալ մանեակ ոսկոյն. Եւ
մանրեալ սափորն յաղթէւրն, Եւ ընկրկեալ
անխն ի Գոթն» (Ժողովողին ԺԲ: 6)

Դեռ արծաթէ լարը չփրթած՝ Ոսկիէ բաժակը չջախջախուած՝ Սափորը աղբիւրին քով չփշրուած՝ եւ ջրհորին վրայի անիւը չջախջախուած:

Հին Կտակարանէն այս մէջբերումը հետաքրքրական է: Կը յանձնարարուի ԺԲ. գլուխը ամբողջութեամբ կարդալ, որովհետեւ հոն նկարագրուած է մարմինն բոլոր պատահածները մարդուն կեանքին ընթացքին: Մարդուն մարմինն զանազան հանգրուանները այս գլուխին վերջաւորութեան «յաւելուածական» մասին մէջ ներկայացուած են: Մարմինը, որ հողէն եկած է կանուխէն կը սկսի ձգտիլ հողին ետ վերադառնալ եւ ի վերջոյ իր նպատակին կը հասնի: Մարդուն հոգին Աստուծոյ էկած է, ուրեմն հոգին ալ կը ձգտի ետ իր Հօր՝ Աստուծոյ ետ վերադառնալ: Ուրեմն մարդ ինչո՞ւ չի ձգտիր ետ իր Հօր վերադառնալ: Որովհետեւ մարդ ընդհանուր առմամբ կ'անտեսէ իր հոգին եւ կը փարի իր «Ես»-ին:

Մարդուն հոգին մարմնին եւ միտքին կապուած է: «Արծաթեայ թելը (լարը)» հոգիին միտքին (ուղեղին) հետ ունեցած կապն է, որ մարդուն կու տայ գիտակցութիւն: Իսկ «Ջրհորին վրայի անիւը» հոգիէն սրտին տրուած կեանքն է, որ մարմնին մէջ արիւնը կը շրջէ: Ոսկիէ բաժակը սիրտը ինքն է: Երբ արծաթեայ թելը փրթի մարդ թմբիրի (coma) մէջ կը մնայ, իսկ Ջրհորին վրայի անիւին ջախջախուիլն ալ արեան շրջումին կենալն է, իսկ փշրուած սափորն ալ մեռած՝ կեցած սիրտն է: Խորունկ քունի մէջ ոգիին մարմնին ելքը տեղի կ'ունենայ առանց արծաթեայ թելի փրթելուն եւ առանց անիւին կենալուն. հետեւաբար, ոգին մարմնին հետ իր կապը խզած չըլլալով, ետ կը վերադառնայ: Երբ հիւանդի մը սիրտը կենայ, բժիշկները երբեմն կը յաջողին «մեռեալ» հիւանդը վերակենդանացնել: Աս կարելի է, որովհետեւ արծաթեայ թելը տակաւին չէ փրթած: Եթէ փրթած ըլլայ անկարելի է որ մեռեալը վերակենդանանայ: Անհատը մեռած կ'ըլլայ, բայց երբեմն կարելի է մարմնին մահը արուեստական միջոցներով ուշացնել:

Ուրեմն ետ գալով մեր նախկին հարցումին, մարդ ինչո՞ւ մահէն կը վախնայ: Այս հարցումը շատ մը պատասխաններ ունի, որոնց մասին տեղեկութիւն պիտի տրուի: Բայց այդ բոլորին հիմնական պատճառը մարդուն խաւարամտութիւնն է: Մարդուն համար մահը կը թուի աննպատակ ըլլալ, որովհետեւ անձը իր խաւարամտութեան հետեւանք հոգիին ձգտումէն անտեղեակ է: Մարդկային ֆիզիքական ծնունդը հոգիին «մահն» է: Հոգին մարմնին մէջ բանտարկուած է: Իսկ մարմնին մահը հոգիին «ծնունդը»՝ բանտէն ազատ արձակումն է: Մահը միականութեան փորձառութիւնը ունենալն է: Անոնք, որոնց անհատականութիւնը ներքին Քրիստոսին կը ձգտի, կը գիտնան Անոր կամքը եւ կը տեսնեն

մահը իբրեւ հակումի արդիւնք եւ սիրոյ արտայայտութիւն: Բայց անոնք, որոնց անհատականութիւնը իրենց «Ես»-ին կը ձգտի, մահը կ'ըլլայ անակնկալ ապշանք մը եւ վախի պատճառ:

Մարդ իր խաւարամտութեան հետեւանք կը խեղաթիւրէ Աստուածային ճշմարտութիւնը, հետեւաբար կը վախնայ մահէն: Այս վախին զանազան պատճառները, որոնք ծագում կ'առնեն մարդուն խաւարամտութենէն, հետեւեալներն են. ապագայի մասին անծանօթութիւնը, մահը կը տեսնեն իբրեւ ամէն ինչի վերջը, կասկած եւ տարակուսութիւն անմահութեան նկատմամբ, սիրելիներէ բաժանումի վախը, յարումն ու նոյնացումն պատրանքային բազմազանութեան հետ եւ կապուիլ անոնց, բնազդական «Ես»-ի պահպանութեան ձգտում եւ «երկինք»-ի եւ «դժոխք»-ի նկատմամբ խեղաթիւրուած քարոզչութիւններու ազդեցութեան հետեւանք:

Ճէլալէթթին Րումի հետեւեալը ըսած է.

«Քար էի ու մեռայ եւ բոյս եղայ, բոյս էի ու մեռայ եւ կենդանի եղայ, կենդանի էի ու մեռայ եւ մարդ եղայ: Ինչո՞ւ վախնամ մեռնելէ: Մեռնելով ե՞րբ նուազեցայ որ: Մարդ եմ ու պիտի մեռնիմ եւ հրեշտակ պիտի ըլլամ:»

Մահը պարզապէս ճամբորդութեան մը իր թիրախին հասնիլն է: Այս ճամբորդութեան սկիզբը մարմնին ծնունդն է իսկ վերջաւորութիւնն ալ անոր մահը: Մարդինք իր մարմինը չէ, այլ զայն գործածողն է: Երբ ինք իր մտքին մէջ կը նոյնանայ իր մարմնին հետ, այն ատեն է, որ մահէն կը վախնայ, քանզի չուզեր մարմինէն բաժնուիլ: Ինք կը կարծէ, թէ եթէ մարմինը մեռնի եւ անհետանայ, ինք ալ կ'անհետանայ: Մարմինը պարզապէս հոգիին փոխադրութեան միջոցն է: Ճիշդ է թէ մարմնին մահէն շատ կարճ ժամանակ վերջ կը մեռնի նաեւ մարդուն միտքը, ինչպէս նաեւ իր «Ես»-ը:

Ճիշդ ասոր համար Աւետարանին մէջ գրուած է.

«**Զի խոշակն մեղաց մահ է**» : (Հովհաննէս 9:23)

«Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է»:

Բայց մարդուն անհատականութեան մէջի տեղեկութիւնը հոգիին միացած կը կազմէ մարդուն ոգին եւ կը գոյատեւէ մարմնին մահէն վերջ:

Ճշմարտութիւնը այն է, թէ այն մարմինը, որ մեռած կը նկատենք, իր մէջ տակաւին կեանք կը պարունակէ: Այդ կեանքը շատ ցած մակարդակով յայտնուած է: Ան բջիջներուն կեանքն է: Ճիշդ ասոր համար մեռեալ դիակին մորուքի մագերը կերկարին: Անտարակոյս, առանց արեան շրջման՝ թթուածինի պակասի հետեւանք, մի քանի օրէն մորթի բջիջներն ալ կը մեռնին եւ մարմինը կը փտի եւ կը տարբադադրուի: Բայց կեանքը շատ աւելի ցած մակարդակով կը շարունակէ գոյատեւել մասնիկներու եւ հիւլեններուն մէջ: Մի-թէ ընդհանուր ստեղծագործութիւնը Քրիստոսի զանազան արտայայտութիւնները չէ՞ն: Միթէ միակ ճշմարտութիւնը Աստուած չէ՞ եւ Քրիստոս ալ կեանքը չէ՞:

Մահուան ինչ ըլլալը պարտ ենք սորվիլ լամբարի արձակած լոյսէն: Լամբարը վառ կը մնայ երբ իր մէջ իւղ կը պարունակէ: Երբ իւղը հատնի բոցը՝ լոյսն ալ կը մարի: Որքան ատեն որ իւղը կը գոյատեւէ բոցը կը շարունակէ լուսաւորել: Իւղը կը ներկայացնէ Քրիստոս իսկ բոցն ալ մեր կեանքը: Պարտ ենք մեր մտատիպարը իւղը՝ Քրիստոսը ընել: Իսկ մենք ի՞նչ կ'ընենք, մեր «Ես»-ին կը յարինք եւ ատելութիւն կը բաշխենք:

Մահը պայքար մըն է ուր բարձրագոյնը թանձրէն՝ նիւթէն կը բաժնուի:



ՅԱԲԵԼՈՒԱԾԱԿԱՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳՐՈՒՄՆԵՐԸ

ՀԻՍՏՈՒԱԾ՝ ԺԱՐՊԿՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔԻՆ ԺԻՅԻՆ ՏԵՌՊՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

*Մարդկային կանքը ունի չորս հանգրուաններ:
Այս չորս մասերէն իւրաքանչիւրն ալ բաժնուած է երեքական
ժամանակամիջոցներու:*

Ա - ՄԱՍ

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՒ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՇՐՋԱՆ

*Այս հանգրուանին անհատը կ'ըլլայ կարօտեալ:
ա- Ծնունդէ մինչեւ 7 տարեկան .*

*- Ուղեղը կը կազմուի եւ այս շրջանը կը կոչուի
մանկութեան շրջան:*

բ- 8 տարեկանէն մինչեւ 14 .

*- Միտքը լիովին կը կազմուի եւ շրջանը կը կոչուի
մանկական - պատանեկան շրջան:*

գ- 15 տարեկանէն մինչեւ 21

*- Իմացականութիւնը կ'աճի եւ շրջանը կը կոչուի
պատանեկան շրջան:*

Բ - ՄԱՍ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՍՈՒՆ ՄԱՐԴ

*Այս հանգրուանին անհատը ալ աւելի կ'ապաւինի իր
ֆիզիքական կարողութիւններուն եւ կը կառավարուի իր
ֆիզիքական կիրքերէն:*

ա- 22 տարեկանէն մինչեւ 28

*- Անհատը կը վայելէ լիովին կազմուած մարմին, միտք
եւ իմացականութիւն ու շրջանը կը կոչուի երիտասարդ
հասուն մարդու շրջան:*

բ- 29 տարեկանէն մինչեւ 35

*- Անհատը կը սկսի իր ցանած «հունտերուն» հունձքը
քաղել եւ այս շրջանը կը կոչուի երիտասարդութեան միջին
շրջան:*

գ- 36 տարեկանէն մինչեւ 42

*- Անհատը կը շարունակէ քաղել իր ցանած հունտերուն
հունձքը եւ այս շրջանն ալ կը կոչուի երիտասարդութեան
վերջին հանգրուանի շրջան:*

Գ - ՄԱՍ

ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔԸ ՀԱՍԱԾ ՄԱՐԴ

Այս հանգրուանին անհատը կ'ըլլայ աւելի զգացական:

ա- 43 տարեկանէն մինչեւ 49

- Կը շարունակէ քաղել իր ցանած հունտերուն հունձ-
քը եւ շրջանը կը կոչուի միջին տարիքի առաջին հանգրուանը:
բ- 50 տարեկանէն մինչեւ 56

- Կը շարունակէ քաղել իր ցանած հունտերուն հունձ-
քը եւ շրջանը կը կոչուի միջին տարիքի միջին հանգրուանը:
գ- 57 տարեկանէն մինչեւ 63

- Կը շարունակէ քաղել իր ցանած հունտերուն հունձ-
քը եւ շրջանը կը կոչուի միջին տարիքի վերջին հանգրուանը:

Դ - ՄԱՍ

ԾԵՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ

Այս հանգրուանին անհատը կ'ըլլայ աւելի իմաստուն:

ա- 64 տարեկանէն մինչեւ 70

- Հարց կու տայ թէ ի՞նչ էր կեանքին նպատակը եւ
շրջանը կը կոչուի ծերութեան սկզբնական շրջան:
բ- 71 տարեկանէն մինչեւ 77

- Կ'անդրադառնայ իր վատնած կեանքին եւ շրջանը կը
կոչուի ծերութեան շրջան:
գ- 78 տարեկանէն մինչեւ 84

- Կը զղջայ իր վատնած կեանքին համար եւ այս շրջանն
ալ կը կոչուի խոր ծերութեան շրջան:

Այն ինչ որ միջոցի եւ ժամանակի դրութեան մէջն է եւ
ժամանակի ենթակայ, է նաեւ փոփոխութեան ենթակայ:

**Անցեալին իմաստուն մարդու մը հարցուցած
էին, թէ ի՞նչ է կեանքին իմաստը:
Ան պատասխանեց.
Կեանքը ինքնին իմաստ մը չունի,
սակայն ան իմաստ մը ստեղծելու
առիթը կու տայ:**



Գ

ՄԱՐԴ ԻՆՉՈՒ ԿԸ ՄԵՌՆԻ



ՄԱՐԴ ԻՆՉՈՒՒ ԿԸ ՄԵՌՆԻ

Երեք հիմնական պատճառներ կան, թէ մարդ ինչո՞ւ կը մեռնի: Նախորդ գլուխին մէջ ասոնց առաջին պատճառին նկատմամբ որոշ տեղեկութիւն տրուած էր: Առաջին պատճառը վերահաստատումն է: Ի՞նչ է վերահաստատումը: Ան դէպի իր ակին վերադառնալն է: Մարմինը հողէն՝ նիւթէն եկած է եւ ի վերջոյ պարտ է կամ կը ձգտի հողին ետ վերադառնալ: Հոգին Աստուծոյ եկած ըլլալով կը ձգտի ետ Հայր Աստուծոյ վերադառնալ: Երկրորդ պատճառը վտարումն է: Ի՞նչ է որ կը վտարուի: Թէ՛ մարմինն եւ թէ՛ մտքին ազդեցութիւններն են որ կը վտարուին: Մարմինն եւ մտքին մահուամբ մարդու անհատականութիւնը անոնց ազդեցութենէն կ'ազատի: Բայց անոնք անհրաժեշտ ազդակներ են որպէսզի մարդ յաջողի իր կեանքը իմաստաւորել: Բայց եթէ անոնք մարդուն «Ես»-ին ազդեցութեամբ կը գործեն, դրական ազդակներ ըլլալէ կը դադրին եւ աւելի վնասակար կ'ըլլան քան թէ օգտակար: Երրորդ պատճառն ալ լրացնումն է: Մարդուն զօրութեան «մարմին»-ը՝ ոգին կը միանայ ընդհանուր Ս. Հոգիի զօրութեան եւ որոշ չափով միականութեան մաս կը կազմէ:

Բնութեան մէջ հրաշալի օրինակ մըն է դիտել ծառի մը տերեւները: Ամէն աշնան բոլոր տերեւները կ'իյնան, կը թափին ու կը մեռնին: Բայց գարնան տերեւները դարձեալ կը ծաղկին եւ ծառը աւելի կ'աճեցնեն: Նմանապէս մարդու մահուան պատճառն ալ յաջորդական մահուան ու վերամարմնացումի միջոցաւ աճեցնել է մարդուն անհատականութիւնը մինչեւ որ ան արժանի ըլլայ յարութիւն առնելու եւ Աստուծոյ միականութեան մաս կազմելու: Ան արդէն միականութեան մաս կը կազմէ, բայց իր խաւարամտութեամբ

ան չէ հասկցած ճշմարտութիւնը եւ կապուած է պատ-
րանքային զանազանութեան, հետեւաբար իր աճիլը
պարզապէս անդրադառնալ մըն է այն ճշմարտութեան
ինչ որ ինք արդէն է: Մահը յարութեան համար
յառաջընթաց անհրաժեշտութիւն մըն է: Միթէ Յիսուս
խաչին վրայ չի՞ մեռաւ, որպէսզի յարութիւն առնէ:
Մահը ըստ Աստուծոյ կամքին Հոգիէն մարդուն
անհատականութեան փոխանցուած ներհայեցողութիւն
մըն է: Հետեւաբար կեանքին ակը մահուան միջոցն է:
Ֆիզիքական ստեղծագործութիւնը, հարկաւ ներառեալ
«մարդը», ենթակայ են թէ՛ միջոցի եւ թէ՛ ժամանակի
դրութիւններուն: Այս վերջինները ճշմարտութիւն չեն
այլ միայն պատրանքային, անոր համար ալ փոփոխու-
թեան ենթակայ: Միթէ ամբողջական բնագիտութիւնը
չէ՞ ըսած թէ անոնք յարաբերական են: Իսկ Յիսուս
Քրիստոս մեզի սորվեցուց յաւիտենականութեան
մասին: Մեր ներկայ ապրած կեանքն ալ ենթակայ
ըլլալով միջոցի եւ ժամանակի պէտք է յարաբերական
եւ պատրանքային ըլլայ: Հետեւաբար արդեօք պէտք է
զարմանք պատճառէ թէ «պատրանքային» մահուան
կ'ենթարկուինք: Յաւիտենականութիւնը ժամանակի
դրութենէ դուրս ըլլալն է: Միայն երկու բան
յաւիտենական են. մին, Աստուած յաւիտենական է, ոչ
սկիզբ եւ ոչ ալ վերջ ունի: Ժամանակի մէջ ամէն ինչ
թէ՛ սկիզբ մը եւ թէ՛ ալ վախճան մը ունին: Եթէ
Աստուած ժամանակի ենթակայ չէ, Աստուծոյ համար
ոչ անցեալ եւ ոչ ալ ապագայ գոյութիւն ունին, իսկ Ան
միայն ներկային մէջ է: Հետեւաբար ներկան ալ պէտք
է յաւիտենական ըլլայ: Ուրեմն Յիսուս Քրիստոսի
սորվեցուցած յաւիտենական կեանքն ալ մեզի համար
պէտք է իրականանայ հիմայ ներկային եւ ոչ մահէ
ետք ապագային: Մահը օգտակար եւ ուղղիչ
պատահմունք մըն է: Ան մարդուն առիթը կու տայ, որ

անհատը յաւիտենականութեան կարճ մէկ փորձառութիւնը ունենայ, որպէսզի յաջորդ վերամարմնացման ուղղութիւն փոխէ իր «Ես»-էն դէպի իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս եւ ինքզինք արժանի ընէ յարութեան: Յարութիւնը կարելի կ'ըլլայ երբ անհատը լրիւ ինքզինք ձերբազատած կ'ըլլայ նիւթապաշտութենէ եւ անձնասիրութենէ: Նման փոփոխութիւն անհատին մէջ մահուան վախը կ'անհետացնէ: Մահը իրեն համար պարզապէս ոգիին՝ զօրութեան մարմին, ֆիզիքական մարմինէն բաժանումը կ'ըլլայ, որ ինք յօժարաբար կ'ընդունի, նոյնիսկ կը ցանկայ: Յարութեան իրականացման համար մարմինն հետ պէտք է նաեւ անձին «Ես»-ն ալ մեռնի եւ անհետանայ: Միթէ Յիսուս չէ՞ ըսած.

«Որ խնդրիցէ պանշն իւր ասորեցոցանէլ,
կորոսցէ պնա. եւ որ կորոսացէ,
ասորեցոսցէ պնա»: (Ղաւառոս ԺԷ:33)

«Ով որ ջանայ փրկել իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն. իսկ ով որ կորսնցնէ իր անձը՝ պիտի ապրեցնէ զայն»:

Որ անիւ պանշն իւր՝ արշակէ պնա. եւ որ
ասորեայ պանշն իւր յաշխարհիս յայամիկ, 'ի
կէանան յա-իթե-նականա պաւեացէ պնա»: :
(Յովհաննոս ԺԲ:25)

«Ան որ կը սիրէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն՝ եւ ա՛ն որ կ'ստէ իր անձը այս աշխարհի մէջ՝ յաւիտենական կեանքին համար պիտի պահէ զայն»:

Յիսուսի ըսած «անձ»-ը մարդուն «Ես»-ը կը ներկայացնէ: Յիսուս կրնար ինքզինք խաչին վրայէն ազատել եւ չմեռնիլ: Ան երեք տարի առաջ անապատին մէջ, իր կապը խզեց իր «Ես»-ին հետ, բայց «Ես»-ը չէր անհետացած: Միթէ չէ՞ գրուած.

«Եւ կարարեալ զամենայն փորձոյթիւնս
աստանայի, 'ի Բա'ց եկաց 'ի նմանէ ա-
ժամանակ մի» : (Ղուկաս Դ:13)

«Երբ Զարիսուր լմնցուց ամբողջ փորձութիւնը, ատեն
մը հեռացաւ անկէ»:

Իսկ խաչին վրայ Յիսուսի ամէնէն խոցելի
պահուն, իր անհատականութիւնը իր էութեան
Քրիստոսի հետ ունեցած կապը կորսնցուց, հետեւաբար
աղաղակեց.

«Եւ զինն ժաման Գողթա'ց Յիսուս 'ի
յայն մէջ՝ եւ ասէ. Է՛ղի, Է՛ղի, զա՛մս
ասեալիքանի: Ըյոնի՛ն Լսորոսա՛ծ իմ,
Լսորոսա՛ծ իմ, ընդէ՞ր Բողթը զիս» :
(Մարկէոս ԻԷ:46)

«Ժամը իննի ատենները Յիսուս բարձրաձայն
աղաղակեց. «Էլի՛, Էլի՛, լամա՞ սաբաքթանի», որ ըսել է.
«Իմ Աստուածս, իմ Աստուածս, ինչո՞ւ Լքեցիր զիս»:

Յիսուսի հետ խաչուող բանտարկեալներէն մին
յանձնարարեց, որ Յիսուս թէ՛ ինքզինք եւ թէ՛ զիրենք
ալ ազատէ: Աս Յիսուսի իր «Ես»-ին փափաքն էր:
Յիսուս անգամ մը եւս անտեսեց իր «Ես»-ը եւ
վերջապէս մարմնին հետ «Ես»-ն ալ խաչին վրայ
մեռան եւ Յիսուս Քրիստոս յարութիւն առաւ: «Ես»-ը
պէտք է մեռնի, որպէսզի ոգին յաւիտենական կեանքի
արժանանայ: Այն անձը, որ իր «Ես»-ը կ'անտեսէ,
ինքնագոհողութամբ միշտ բոլորին կ'օգնէ ու սէր կը
բաշխէ: Եւ ահա, աս է բուն պատճառը թէ մարդ ինչու
կը մեռնի, որպէսզի շարունակաբար մեռնելով եւ
վերամարմնանալով, ըստ բարեշրջման օրէնքներուն,
դասերը սորվի եւ օր մըն ալ յաջողի արժանանալ
յարութեան եւ յաւիտենական կեանքի: Այն ինչ որ

Յիսուսը ըրաւ եւ մեզի ալ ըսաւ իրեն նմանիլ: Միթէ չէ՞ ըսած.

«Ո՛չ է աշակերտ լա՛ւ ձան՝ զվարդապետ իւր, ամենայն կարարեալն՝ եղիցի ի թրեւ զվարդապետ իւր»: (Գաւառ .9:4)

«Աշակերտը իր վարդապետէն գերիւեր չէ. բայց ամէն կատարեալ աշակերտ՝ իր վարդապետին պէս պիտի ըլլայ»:

«Լըդ եղերո՛ւն՝ դո՛ւն կարարեա՛լ է, որպէս եւ Հայրըն յեր երկնաւոր կարարեա՛լ է» : (Մարշէոս Ե:48)
«Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»:

Կարելի է գտնուին ոմանք, որ վերամարմնացման չհաւատան: Վերամարմնացումը Ս. Գրային իրողութիւն մըն է: Մօտաւորապէս Յ. Ք. 650ական թուականներուն այդ գաղափարը վերջնականօրէն Քրիստոնեայ կրօնքէն վերցուեցաւ: Աւետարանէն հետեւեալ մէջբերումը բացայայտ կ'ընէ վերամարմնացման գաղափարը:

«Որ յաղթէ՝ արարից պնա ախն Կաճարի
Լսորոշոյ իմոյ, եւ արդաւն ալ մի եւս ելցէ.
Եւ Գրեցից 'ի վերայ նորա պանուն Լսորոշոյ
իմոյ, ...» : (Յայրնոթիւն Գ:12)

«Ան որ կը յաղթէ, գանիկա իմ Աստուծոյ տաճարին մէջ սիւն մը պիտի ընեմ ու ալ դուրս պիտի չելլէ: Անոր վրայ իմ Աստուծոյ անունը պիտի գրեմ ...»:

Աստուծոյ տաճարին մէջ սիւն ըլլալ եւ այլեւս դուրս չելլել յաւիտենական կեանքի արժանանալ կը ներկայացնէ: Իսկ շարունակ «դուրս ելլել»-ը բազմաթիւ վերամարմնացումներն են: Ան, որ յաւիտենական կեանքի կ'արժանանայ, Աստուծոյ հետ մէկ կ'ըլլայ եւ ահա՛, «Անոր վրայ իմ Աստուծոյ անունը պիտի գրեմ»-ին իմաստն ալ աս է: Որովհետեւ մարմինէն վերջապէս ազատած մարդուն ոգին կուգէ Աստուծոյ

Հետ մնալ, բայց իր գործած մեղքերուն պարտքերը նախ պարտ են «վճարուիլ», անհատը կ'ընտրէ վերամարմնանալ, մարմին ու միտքով մը ինչպէս նաեւ ճակատագրով մը, որ համապատասխան են իր «վճարելիք» մեղքերուն: Ահա', աս է պատճառը տարբերակ ծնունդներու: Դժբախտաբար միշտ նոր մեղքեր կը գործուին եւ մահուան եւ վերամարմնացման «անիւ»-ը կը թուի շարունակաբար դառնալ: Երբ մարդ կը վերամարմնանայ իր մարմնին տուած սահմանափակումներուն հետեւանք կը կորսնցնէ բարձր որակով գիտակցութիւնը: Ան, կեանքին տուած տառապանքներէն կը սորվի որոշ դասեր եւ կը վճարէ իր պարտքերը, այն նպատակը որուն համար ինք ընտրած էր վերամարմնանալ: Բայց իր խաւարամտութեան եւ մոռացութեան հետեւանք կը գործէ նոր մեղքեր եւ կ'ամբարէ նոր պարտքեր:

Ուրեմն երբ հարց կու տանք, թէ մարդ ինչո՞ւ կը մեռնի: Պատասխանը պարզ է: Կեանքը եւ մահը Աստուծոյ կամքին համաձայն կ'ըլլան, ի շահ անհատին, որպէսզի ան յստակ հասկացողութիւն ունենայ իր կեանքին նկատմամբ եւ իր կեանքին բուն նպատակին: Յիսուս Քրիստոս այս բոլորը մեզի սորվեցուց, բայց մենք իրեն սորվեցուցածները կ'անտեսենք ու միայն բերանացի ըլլալով Զինք կը պաշտենք: Իր սորվեցուցածները չենք կիրարկեր եւ ինքզինքնիս ապահով կը զգանք ըսելով թէ Ան մեր մեղքերուն համար մեռաւ հետեւաբար փրկուած ենք, իսկ Յիսուս կ'ըսէ. «Սաչդ առ եւ ետեւէս եկուր» Ան նաեւ ըսած է.

«Ո՛չ ամենայն որ ասէ ցիս՝ Տէ՛ր Տէ՛ր, մոցէ

յարժայո՞ւնիւն երկնից, այլ որ ասէ՛ն զհամա Ըօր

իմոյ որ յերկնսն է»: (Մատթէոս Է: 21)

«Ո՛չ թէ ո՛վ որ ինծի՛ «Տէ՛ր, Տէ՛ր կ'ըսէ, պիտի մտնէ երկինքի թագաւորութիւնը, հապա ան՝ որ կը գործադրէ իմ երկնաւոր Հօրս կամքը»:



Դ

ԻՆՉ Է ԵՐԱՆՈՒԹԻՒՆԸ



ԻՆՉ Է ԵՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բուն երանութիւնը հասկնալէ առաջ, նախ նկատողութեան առնենք մեր փորձառութեան մաս կազմող երջանկութիւնը եւ անոր պատճառները:

Ըստ Պօստոնի մէջ 85 (1938-2023) տարուայ տեւողութիւն ունեցող ուսումնասիրութեան, որ նկատողութեան առած է երեք սերունդներ, յառաջ բերած արդիւնքներուն, երջանկութեան պատճառները ի յայտ բերուած են: Հետեւեալ տեղեկութիւնը քաղուած է բժշ. Մորիսիօ Վայնկարդըն (Mauricio Wajngarten)–ի գրութենէն: Երջանկութեան համար գտնուած են երկու գլխաւոր ազդակներ: Անոնցմէ մին առողջութիւնն է եւ երկրորդն ալ՝ ուրիշ անձերու հետ իմաստալից ու մտերիմ յարաբերութիւններ՝ բարեկամներ, ունենալը: Զանազան ուրիշ ազդակներ ալ նկատողութեան առնուած են, բայց այս ներկայացուած երկու ազդակները կարեւորներն են: Միւս ազդակներէն մին, գործի մէջ յաջողութիւնն է: Ճիշդ է թէ այս ազդակը գոհունակութիւն տուած է, բայց ոչ երջանկութիւն: Որոշ չափով ուսումն ու կրթութիւնն ալ իրենց ազդեցութիւնը ունեցած են իբրեւ դրական ազդակներ, բայց եւ սակայն կը թուի միայն 1960–էն ետք եւ այդ ազդեցութիւնը անհատին պատշաճ առողջապահական օրէնքներուն հետեւելու արդիւնք եղած է: Կը թուի թէ բժշկական գիտութիւնը աւելի յառաջանալուն եւ հիւանդութիւններու պատճառները աւելի լաւ որոշուած ըլլալուն ուսեալները աւելի հմուտ եղած են այդ գիտութեան եւ զանոնք կիրարկած իրենց կեանքին մէջ:

Նոյն գրութեան մէջ նաեւ տեղեկացուած է, թէ անոնք որոնք չեն պայքարած իրենց միջավայրը փոխելու համար միշտ դրական եւ լաւ պատահարներու ենթարկուած են: Կը թուի թէ մեր կեանքի պայմաններու ընդունակութիւնը մեզի համար աւելի դրական

ազդեցութիւն կունենայ: Իսկ անոնց համար որ կը կարծեն թէ ամէն ինչ իրենք լաւագոյնս գիտեն՝ ճիշդ հակառակը եւ յայտնի կ'ըլլայ թէ սխալած են:

Այս երջանկութեան նկատմամբ ներկայացուած կարճ տեղեկութենէ ետք ջանանք ուսումնասիրել երանութիւնը, որ տակաւին մեր փորձառութեան մաս չի կազմեր:

Ի՞նչ է երանութիւնը: Ըստ «Մալխասեան բառարան»-ի հետեւեալ բացատրութիւնը տրուած է. Երանելի վիճակ, գերագոյն երջանկութիւն, կատարեալ բարօրութիւն», իսկ՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ի մէջ ալ հետեւեալը. «Երջանկութիւն ծայրագոյն. պարառութիւն ամենայն բարեաց. բարեբաստութիւն կատարեալ՝ բաղձալի եւ նախանձելի. սրբանուէր վիճակի առաջնորդաց»:

Ինչպէս նախորդ գլուխներուն մէջ գրուած է ստեղծագործութեան մէջ ամէն ինչ երկուութեան ենթակայ է: Մարդ, իր կեանքի ընթացքին կրնայ ունենալ թէ՛ ուրախութեան եւ թէ՛ ալ երջանկութեան պահեր: Բայց ժամանակի դրութեան մէջ ամէն ինչ ժամանակաւոր է, հետեւաբար, անխուսափելիօրէն այդ ուրախութեան եւ երջանկութեան կը յաջորդեն տխրութեան եւ տաժանքի պահեր: Երբ իրարու սիրահարուած երկու անձեր միասին ժամանակ անցնեն, իրենք զիրենք բացարձակ երջանիկ կը զգան: Անոնք, որովհետեւ երանութեան փորձառութիւնը չեն ունեցած, կը կարծեն թէ իրենց զգացածը երջանկութեան գազաթնակէտն է: Բախտամամբ երանութեան իրենց երջանկութիւնը ճշդիմ զգացում մըն է: Ըստ վերեւ նշուած բացատրութիւններուն, հետեւեալ ածականները օգտագործուած են. «գերագոյն», «կատարեալ», «ծայրագոյն», «բաղձալի», «նախանձելի» ինչպէս նաեւ «պարառութիւն ամենայն բարեաց»: Երանութիւնը անհուն սիրոյ արտայայտու-

թեան եւ փորձառութեան զգացումն է: Ան նաեւ անհուն բարութեան դրսերեւումն է: Երբ Յիսուսին «բարի վարդապետ» կոչեցին, Յիսուս հետեւալ պատասխանը չէ՞ր տուած.

«Եւ Յիսուս՝ աւել ցնաւ. Զի՞ աւելս զիս
բարի, չի՛նք ո՛ր բարի՝ բայց մի Աստուած
Հայր»: (Մարկոս Ժ:18)

Յիսուս ըստ անոր. «Ինչո՞ւ բարի կը կոչես զիս. մէկէ՛ն գատ բարի չկայ՝ որ Աստուած է»:

Երանութիւնը երկուութեան ենթակայ չէ, որովհետեւ ան Աստուծոյ ներկայութեան փորձառութիւնը ունենալն է: Միթէ ըստ Յիսուսի այս խօսքին Աստուած «պարառութիւն ամենայն բարեաց» չէ՞: Նաեւ չէ՞ գրուած. «Աստուած սէր է»:

Արդեօք կարելի է՞, որ մարդ արարած երանութեան փորձառութիւնը ունենայ: Անտարակոյս Յիսուս ճիշդ աս էր, որ մեզի սորվեցուց: Ինչպէս այս գիրքին նախորդ էջերուն մէջ գրուած էր, նախ անհատը պէտք է իր կեանքը իմաստաւորէ, իր կեանքին նպատակը հասկնայ եւ զայն իրականացնելու համար ալ որեւէ ջանք չխնայէ: Անհատը պարտ է վերել նշուած յատկութիւնները իր մէջ յառաջացնէ: Յիսուս իր լերան քարոզով եւ «Տէրունական աղօթք»-ով երանութեան հասնելու միջոցը մեզի սորվեցուց: Այս հանգրուանին, այս ուղղութեամբ պատշաճ է «Ես եմ» խորագրեալ նախորդ գիրքէս մէջբերում մը ընել:

«Ի՞նչ էին լերան քարոզին սորվեցուցածները:
Այս ուղղութեամբ տես նախորդ գիրքերէս «Լոյս
ի Լուսոյ» գիրքին մէջ Զ. գլուխը էջ 131, նաեւ
«Աւետարանի Խորհուրդները Գ - Յիսուսի Խօսքերը» վերնագրեալ գիրքին մէջ էջեր 44-50, ինչպէս նաեւ «Աւետարանի Խորհուրդները Դ - Յով-

Հաննու եւ Թովմասի Աւետարան» գիրքիս մէջ «Աւետարանի Ամփոփում» խորագրեալ Դ. գլուխին մէջ էջ 263, եւ նամանաւանդ էջեր 293-302: Յարմար է հոս համառօտ կրկնութիւն մը գրել:

«Լերան քարոզին մէջ, Յիսուս Քրիստոս այն մարդկային յատկութիւնները, որ անհրաժեշտ են հոգեւոր կեանքի մէջ յաջողելու համար, ներկայացուց իր ըսած եօթը «երանի»-ներովը, իսկ յաջողութեան միջոցն ալ, իր ներկայացուցած աղօթելու ձեւով: Մարդ ինչո՞ւ երանելի է, երբ այդ յատկութիւնները իր մէջ կը յառաջացնէ: Ան երանելի է, որովհետեւ Աստուծայայտութիւնը՝ Քրիստոսի յայտնութիւնը իր մէջ իրականացնելու կարելիութիւնը ունի: Ուրեմն ի՞նչ են այդ եօթը երանելի յատկութիւնները: Անոնք «Հոգւով աղքատ», «սգաւոր», «հեզ», «անօթի ու ծարաւ», «ողորմած», «սրտով մաքուր», «խաղաղարար» եւ «արդար» ըլլալն են: «Աղքատ»-ութիւնը պակասութեան մը արդիւնքն է: Երբ անձ մը դրամ չունի իր առօրեայ կարիքները հոգալու, ինքզինք աղքատ կը նկատէ: Այս պարագային, Յիսուսի ականարկը հոգեւոր կեանքի մէջ յառաջացման պակասին համար է: Երբ մարդ այս պակասը զգայ այն ատեն է, որ իր հոգւով աղքատ ըլլալուն կ'անդրադառնայ: Այս անդրադարձը անհրաժեշտ է ապագայ յաջողութեան համար եւ հոգեւոր ճանապարհին մէջ առաջին քայլը: Ի՞նչ է իմաստը «սգաւոր» ըլլալուն: Մարդ սգաւոր կ'ըլլայ երբ ան ընտանեկան անդամի մը կամ սիրելիի մը, երբեմն նոյնիսկ անասունի մը մահուամբ, անոնց կորուստին համար կ'ողբայ: Այս պարագային Յիսուսի ըսած սգաւորը այն անձն է, որ իմացականօրէն գիտնալով հանդերձ


Թէ՛ Քրիստոս իր մէջ, իր ճշմարիտ էութիւնն է, Անոր ներկայութեան փորձառութեան կորուստին համար է որ կ'ողբայ եւ սուգ կը բռնէ: Ինչո՞ւ «հեզ»-երը երանելի են: Անոնք որոնք հեզ եւ խոնարհ են, անտեսած են իրենց «Ես»-երը: Երբ «Ես»-ը Աստուծոյ գահին վրայ նստած ըլլայ անձն ալ հոգեւոր կեանքի մէջ յառաջանալու կարելիութիւնը չ'ունենար: «Ես»-ը հպարտութիւն կու տայ: Իսկ հեզութիւնը կարելի է միայն այն ատեն երբ հպարտութիւնը գոյութիւն չ'ունենար: Պարզ է հասկնալ թէ ինչ է անօթի եւ ծարաւ ըլլալ: «Անօթի՝ սովահար եւ ծարաւ» մարդու մը համար, որ մահուան սեմին է, բացի պատառ մը հաց կամ կաթիլ մը ջուրէն ոչինչ կ'արեւորութիւն ունի: Նմանապէս հոգեւոր կեանքի մէջ ալ անձը պարտ է նոյն չափով, նոյն աստիճանով ուզէ՝ տենջայ Քրիստոս իր մէջ յայտնաբերել: «Ողորմածութիւնը» ճշմարիտ պաշտամունքն է, ան Քրիստոս «տեսնել» է ամէն անձի եւ ամէն ինչի մէջ եւ իր կարողութեան համաձայն ալ բոլորին օգնելն է: Ան ինչ որ կու տանք, կու տանք Քրիստոսին: Ի՞նչ է իմաստը «սրտով մաքուր» ըլլալուն: Արամերէն լեզուի մէջ, որ Յիսուս կը խօսէր, «միտք» բառին համապատասխան բառ գոյութիւն չունի, այլ միայն «սիրտ» բառը կը գործածուի, թէ՛ «միտք» եւ թէ՛ ալ «սիրտ» իմաստներով: Հետեւաբար «սուրբ սիրտ»-ը կը ներկայացնէ խորհուրդներէ, զգացումներէ եւ յուզումներէ սրբուած, մաքրուած միտք մը: Նման միտք մը կարելիութիւնը ունի առանց խանգարումի կեդրոնանալու մարդուն իր ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի վրայ: Մարդուն գիտակցութիւնը իր ներքին

Քրիստոսի գիտակցութիւնն է՝ յայտնուած մարդուն արտօնած մակարդակով: Երբ գիտակցութիւնը մարդու մտային զանազան խորհուրդներով եւ զգացումներով զբաղ չ'ըլլայ, ան կը գիտակցի Քրիստոսի ներկայութեան, անձին ճշմարիտ էութեան եւ անձը Քրիստոսի ներկայութեան փորձառութիւնը կ'ունենայ: Ծիշտ ասոր համար անոնք երանելի են, որովհետեւ «պիտի տեսնեն Աստուած»՝ Քրիստոս: Անոնք որոնք «խաղաղութիւն» կը սփռեն նաեւ երանելի են: Հակառակ որ համայն մարդկութիւնը Աստուծոյ որդիներն են, շատեր, փարած իրենց «Ես»-ին՝ սատանային, կ'ապրին նման սատանայի որդիներու: Անոնք, որոնք անտեսած են իրենց «Ես»-ը եսասիրութեամբ չեն գործեր, հետեւաբար միշտ կ'ըլլան խաղաղասէր: Ան որ եսասէր չէ չի փնտրեր իր շահը այլ ան կը հետապնդէ միայն «արդարութիւն»-ը եւ ճշմարտութիւնը, նոյնիսկ եթէ ան ենթարկուի հալածանքի իր բռնած ընթացքին համար:

«Նման յատկութիւններ կերտող անձ մը, որ իր բնոյթը պատշաճ կերպով փոխած է, պատրաստ է աղօթելու եւ աղօթքին ալ ամենավեհ ձեւով, այն ինչ որ Յիսուս Քրիստոս սորվեցուց՝ այն ինչ որ Տէրունական աղօթք կ'անուանենք եւ յաճախ կը կրկնենք: Յիսուս աղօթք չտուաւ այլ աղօթելու ձեւը սորվեցուց: Ան նախ ըսաւ. «Եթէ պիտի աղօթես, սենեակդ մտիր ու դուռդ գոցէ»: Ասոր իմաստը փոխաբերական է եւ ոչ բառացի: Սենեակ մտնելը կը ներկայացնէ միտքի ուշադրութեան՝ կեդրոնացման ուղղութիւնը, որ պէտք է ըլլայ անձին իր ներքին Քրիստոսի վրայ եւ ոչ արտաքին աշխարհի: Դուռը գոցելն ալ կը ներ-

կայացնէ ձերբազատումը աշխարհի շրջուցիչ հետապնդումներէն: Աս ալ մաս կը կազմէ աղօթելէ առաջ ինքնապատրաստութեան անհրաժեշտութեան:

«Հետեւեալը Յիսուսի սորվեցուցած աղօթելու ձեւն է.



Այս աղօթելու ձեւը լաւ ըմբռնելու համար հոս անոր վերլուծումը պիտի ընթանայ վերջաւորութեանէն դէպի սկիզբը: Ճիշդ է թէ Աւետարանին մէջ վերեւի վերջին տողը չկայ, ան աւելի վերջ աւելցուած է: Բայց պատշաճ է այդ տեղեկութիւնը տալ, որովհետեւ մարդ պէտք է գիտնայ թէ Որո՞ւ է որ ինք պիտի աղօթէ: Ընդհանուր տիեզերքը կը ներկայացնէ Աստուծոյ թագաւորութիւնը: Հետեւաբար «արքայութիւն»-ը կը ներկայացնէ Հայր Աստուած: Հայր Աստուած ամէն ինչի ծայրագոյն թագաւորն է: «Զօրութիւն»-ը կը ներկայացնէ Հայր Աստուծմէ բըղխած զօրութիւնը՝ Ս. Հոգին: Իսկ այդ զօրութեան նիւթեղէն արտայայտութիւնը, Աստուծոյ Որդին՝ Քրիստոսն է, որ Աստուծոյ «փառք»-ն է: Յիսուսի սորվեցուցած այս աղօթելուն ձեւը, Աստուծմէ աս ու ան խնդրել չէ, այլ աղօթելու ամենավեհ ձեւը, որ խոկալն է: Խոկալը մարդուն միտքին իր

ներքին Քրիստոսի վրայ կեդրոնացումն է բացարձակ մտային լուսթեան մէջ: Դժբախտաբար մարդուն «Ես»-ը՝ սատանան, միշտ կը ջանայ խանգարել խոկումը եւ կը գործէ ի վնաս անձին: Ան չ'ուզեր իր անձին վրայ ունեցած իշխանութիւնը կորսնցնել: Նախ անձը պէտք է ինքզինք ձերբազատած ըլլայ իր «Ես»-էն եւ ահա՛, աս է իմաստը «չարէն փրկուելուն»: Անտարակոյս, նոյնիսկ անոնք, որոնք որոշ չափով յաջողած են իրենց «Ես»-ը անտեսել, միշտ անկէ փորձուելու վտանգին մէջն են, ուրեմն միշտ պէտք է ուշիմ ըլլալ եւ իրենք զիրենք հսկել, որպէսզի «Ես»-ը դարձեալ իր «գլուխը» չբարձրացնէ: Անձը պէտք է պատրաստ ըլլայ ընդունելու իր կեանքի բոլոր պատահարները թէ՛ լաւ, թէ՛ ալ վատ եւ վատերուն համար չմեղադրել որեւէ ուրիշ անձ կամ նոյնիսկ Աստուած, որովհետեւ անոնք բոլորն ալ իր պարտքերն են որ պարտ է ինք ուշ ու կանուխ վճարել: Անձը պէտք է ընդունի թէ ինչ որ ինք կը «քաղէ» իր «ցանածներն» են: Երբ անձը կը յաջողի վերոյիշեալներուն բոլորը լիովին կատարել ու իր միտքը լրիւ կը կեդրոնացնէ, առանց զանազան խորհուրդ ու զգացումներու, իր ներքին Քրիստոսի վրայ, այն ատեն ինք կը ստանայ Ս. Հոգիի յաւելեալ զօրութիւն, որ իր «հանապազօրդ հաց»-ն է: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եմ դուռը»: Անձին ներքին Քրիստոսն է, որ կը բանայ մարդուն խակրաները՝ զօրութեան կեդրոնները, որպէսզի անոնք ընդունակ ըլլան Ս. Հոգիի զօրութեան: Երբ անհատը կը ստանայ Ս. Հոգիի յաւելեալ զօրութիւն, իր գիտակցութեան մակարդակն ալ կը բարձրանայ: Բարձր գիտակցութեան մակարդակն ալ իրեն կը

յայտնէ տիեզերական օրէնքները եւ անձն ալ այդ օրէնքներուն համաձայն ներդաշնակ կը յօրինէ իր կենցաղը: Ինք ապրած կ'ըլլայ ըստ Աստուծոյ կամքին փոխանակ իր «Ես»-ին կամքին: Ընդհանուր ստեղծագործութիւնը կ'ընթանայ ըստ Աստուծոյ կամքին՝ ըստ տիեզերական օրէնքներուն եւ ահա՛, աս է իմաստը «յերկինս»-ին եւ իր կենցաղն ալ ներկայացուած է «յերկրի» բառով, որովհետեւ ինք տակաւին երկրի վրայ է: Երբ մարդ կ'ապրի ըստ Աստուծոյ կամքին, միտքը կեդրոնացած Քրիստոսի վրայ եւ անտեսած արտաքին աշխարհը, ինք փորձառութիւնը կ'ունենայ ամէն ինչի միականութեան, ինք կը տեսնէ Քրիստոս ամէն հոգիի եւ ամէն ինչի մէջ եւ ահա՛, աս է Աստուծոյ «արքայութեան» փորձառութիւնը: Միթէ Յիսուս Քրիստոս չէ՞ ըսած. «Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսիդին է»: Երբ անձը այս փորձառութիւնը կ'ունենայ այն բոլոր անոնները որ կը ներկայացնեն ստեղծագործութեան զանազանութիւնները իրեն համար սուրբ կ'ըլլան, որովհետեւ ինք կը հասկնայ թէ բոլորն ալ Քրիստոսի զանազան երեւոյթներն են: Ինք նաեւ կ'անդրադառնայ թէ «յերկինս»՝ երկինքը զատ տեղ մը չէ այլ գիտակցութեան աստիճան մըն է, Քրիստոսի հետ մէկ ըլլալ եւ Անոր մէջ լուծուիլն է: Այն ատեն ինք բացարձակ «հաւատքով» կը խոնարհի իր Հօր առջեւ եւ կ'ըսէ. «Ես եւ Հայր իմ մի ենք»:

Այս մէջբերումը ամբողջ ընթացք մը կը ներկայացնէ, որ անհատին մէջ Քրիստոսի յայտնութեամբ եւ անհատին երանութեան փորձառութեամբ իր թիրախին կը հասնի: Յիսուս բացայայտ ըսած է թէ ինչ է միջոցը Քրիստոս մեր մէջ յայտնաբերելու՝ Աստուած

տեսնելու: Այդ միջոցը մաքրուած ու սրբուած միտք մը ունենալն է: Միտք մը առանց խորհուրդներու եւ առանց զգացումներու կամ յուզումներու: Երբ միտքը զբաղ կ'ըլլայ խորհուրդներով կամ զգացումներով ան նաեւ կը գրաւէ ու կը զբաղեցնէ մարդուն յայտնաբերած գիտակցութիւնը: Որովհետեւ մարդ տակաւին չէ սորված պատշաճօրէն օգտագործել իր միտքն ու ուղեղը անկարող է յայտնաբերել բարձր որակով գիտակցութիւն: Անտարակոյս գիտակցութիւնը Աստուծոյ գիտակցութիւնն է, անհատին իր ներքին Քրիտոսի շնորհքն է, որ կը գործէ մարդու մտքին միջոցաւ: Երբ գիտակցութիւնը առանց խորհուրդներու ու զգացումներու ազատ կը մնայ, յաւելեալ որակով կը յայտնուի: Անհատն ալ այդ յայտնուած բարձր գիտակցութեամբ փորձառութիւնը կ'ունենայ ճշմարտութեան, ամէն ինչի միականութեան:

Մարդ արարած իր կեանքի ընթացքին, նոյնիսկ ամէն օր փորձառութիւնը կ'ունենայ զանազան մակարդակներով յայտնուած գիտակցութեան: Ամէն մէկ գիտակցութեան մակարդակի փոփոխութեան, անհատին «ճշմարտութիւն»-ն ալ կը փոխուի:

Հետեւեալ մէջբերումը նախորդ գիրքերէս «Աւետարանի Խորհուրդները Դ.»-ի մէջ ալ ներկայացուցած էի թարգմանաբար Բժշ. Ժօ Տիսպէնզաի (Dr. Joe Dispenza) դասախօսութենէն առնուած: Ան, ամէն մի գիտակցութեան մակարդակին տուած ուղեղային ելեկտրական ալիքներուն յաճախականութիւնները ներկայացուցած է:

«Յաջորդաբար դասախօսը ուղեղային պայմանաւորման մասին կը զրուցէ: Ան կ'ըսէ, թէ փորձառութիւնները տեղի կու տան քիմիական բաղադրութիւններու արտադրման, որոնք կու տան զգացումներ եւ պատճառ կ'ըլլան ֆիզիքական

փոփոխութիւններու: Եթէ անհատը չարունակաբար եւ բազմիցս կ'ենթարկուի նոյն փորձառութեան իր միտքը եւ մարմինը այդ ուղեղային քիմիական բաղադրութիւններուն ազդեցութեան տակ կը պայմանաւորուին եւ միտքը ու մարմինը իրարու հետ համերաշխաբար կը գործեն: Եւ ահա աս է «կազմուած բնաւորութիւն»-ը (*second nature*), երբ միտքը ինքնաբերաբար կը խորհի եւ մարմինն ալ ինքնաբերաբար կը գործէ՝ առանց անհատին գիտակցութեան: Մարդ արարած իր ուղեղը կը պայմանաւորէ արտաքին աշխարհը որոշ կերպով մը տեսնել: Մարդ կարող է իր ուղեղի գործելու ձեւը փոխել իր ուշադրութեանը կեդրոնացումովը: Այս ուղեղային գործելու փոփոխութիւնն ալ անհատին աշխարհը ամբողջովին տարբեր կերպով ըմբռնելու ու ճանչնալու կարողութիւնը կու տայ: Աս ալ կը պարտի գիտակցաբար վերհսկելու եւ որոշելու ուղեղային ալիքները: Բոլոր ջղային՝ ուղեղային գործառնութիւնները յառաջ կը բերեն ելեկտրոմագնիսական շողարձակումներ զանազան թրթռացումի յաճախականութեամբ: Բժիշկներ կարող են այդ ուղեղային ալիքները (*brain waves*) եւ անոնց թրթռացումի յաճախականութիւնները ելեկտրաուղեղագիծի (*EEG-electrencephalogram*) միջոցով արձանագրել:

«Դասախօսը ուղեղային ալիքներուն զանազան յաճախականութիւնները եւ անոնց համապատասխանող անհատին գիտակցութեան մակարդակներուն մասին տեղեկութիւն կու տայ: Այս ալիքներուն, իրենց յաճախականութեան համապատասխան տարբեր անուններ (*Յունական այբենարանէն* զանազան տառերու անուններ) տրուած են:

«ա- Պէթա (β) ալիքները (12-32Hz) կը նկատուին բարձր յաճախականութիւն ունեցող ալիքներ: Անոնք ներկայ են երբ անհատին գիտակցութեան մակարդակը արթուն՝ բարձր մակարդակի վրայ է: Այս հանգրուանին անհատին ուշադրութիւնը արտաքին աշխարհին վրայ է եւ ան նաեւ կ'ունենայ տրամաբանելու կարողութիւն, գործելու եւ ընկերակցելու կարողութիւն: Այս հանգրուանին ուղեղը կ'իմաստաւորէ, ուղղակարգ կու տայ եւ կը միաբանէ արտաքին աշխարհի անց-ու-դարձը անհատին ներքին կացութեան հետ: Արթուն եւ գիտակից մարդուն ուշադրութիւնը ընդհանրապէս արտաքին միջավայրին վրայ կ'ըլլայ: Հինգ զգայարաններէն եկած բոլոր տեղեկութիւնները ուղեղին մէջի տեղեկութիւնները կ'ամբողջացնեն:

«բ- Ալֆա (α) ալիքները (8-12Hz) կը գոյանան երբ ուղեղը հանդարտ է եւ չ'աշխատիր: Անհատը կարելի է հանգիստ նստած երաժշտութիւն մը մտիկ կ'ընէ: Այս հանգրուանին անհատին համար իր ներքին «աշխարհը» աւելի կարեւոր է, քան թէ արտաքինը: Ինք կը սկսի անդրադառնալ իր ունեցած խորհուրդներուն: Ան կ'անտեսէ արտաքին աշխարհը: Ան կամաց-կամաց իր գիտակցութեամբ կ'իջնէ իր ենթագիտակցութեան մակարդակին, ուր կը գտնուին իր բնոյթին տուեալները: Այս հանգրուանին խորհուրդներու «ձայն»-ը կը դադրի բայց «պատկեր»-ներ կը յայտնուին: Առանց քնանալու մարդ կարող է այս մակարդակին հասնիլ: Ասոր մէկ օրինակը ինքնաշարժ վարելն է՝ շատ ապահով կերպով, բայց անգիտակցաբար: Աս կը կոչուի անուրջք (day-dreaming): Աս գիտակցութեան մակարդակի յափշտակութիւն մըն է: Այս հանգրուանին անհատը իր զգայա-

րաններէն որեւէ փորձառութիւն չ'ունենար: Ան չ'իմանար, չի գգար, չի համտեսեր, չի հոտոտեր նոյնիսկ չի տեսներ: Կարելի է այս բոլորը տեղի կ'ունենան, բայց իր գիտակցութեան մէջ չեն արձանագրուիր: Անհատին գիտակցութիւնը զբաղ է երեւակայութիւններով:

«գ- Թէյթա (θ) ալիքները (4-8Hz) կը գոյանան երբ ուղեղը քունի մէջ է, ինչպէս նաեւ քնածութեան դրութեան (hypnotic state) մէջ: Այս հանգրուանին շատ դիւրութեամբ կարելի է որոշ տեղեկութիւններ տեղադրել անհատին ենթագիտակցութեան մէջ: Հոգեբոյժերը երբեմն կ'օգտագործեն նման միջոցներ հիւանդը որոշ անձկութիւններէ եւ խուճապէ բուժելու համար: Այս հանգրուանին անհատը քննելու եւ տրամաբանելու կարողութիւնը կը կորսնցնէ: Մարմինը կը հանգչի: Անհատը մտայնօրէն կը գործէ իր ենթագիտակցութեամբ եւ իր անհատականութիւնը եւ իր ինքնագիտակցութիւնը ջնջուած են: Այս հանգրուանին քնացող անհատը նաեւ կ'երագէ:

«դ- Տէլթա (δ) ալիքներու (0.5-4Hz) գոյութիւնը կը նշանակէ խորունկ քունը: Այս հանգրուանին ուղեղը կը վերանորոգուի եւ մարմինն ալ անշարժ (catatonic) է:


«Ետ հետաքրքրական է դասախօսին ներկայացուցած յաջորդ ուղեղային ալիքներու յաճախականութիւնը:


«ե- Կամա (γ) ալիքները (32-100Hz եւ աւելի ...) շատ հազուադիւս կը գտնուին: Այս գիտակցութեան մակարդակին անհատը կը հասնի իմացողութեան եւ ընթանումի գազաթնակէտը՝ շնորհիւ իր յայտնաբերած անհուն գիտակցութեան: Այս «արթնութիւն»-ը արտաքին պարագաներու հե-

տեւանք է՝ այլ ներքին գրգռանիւթերու (hormones) արդիւնք: Այս հանգրուանին մարմնի մէջի գորութիւնը կը բարձրանայ մինչեւ ուղեղ եւ անհատին համար իր ներքին աշխարհն է, որ կը ներկայացնէ ճշմարտութիւնը, քան թէ արտաքին աշխարհը:

«Դասախօսութիւնը հոս կը վերջանայ: Ուղեղային այդ «կամա» ալիքներու գոյութիւնը Աւետարանին մէջ գրուած եւ Յիսուս Քրիստոսի սուրվեցուցած յափշտակութիւնն է: Երբ դասախօսը կ'ըսէ. «ներքին աշխարհը կը ներկայացնէ ճշմարտութիւնը քան թէ արտաքին աշխարհը» կը նշանակէ անհատին մէջ Քրիստոսի յայտնութիւնը եւ անհատին միանալը Քրիստոսի: Անհատը կը գիտակցի ճշմարտութեան եւ կը հասկնայ աշխարհի զանազանութեան պատրանքային ըլլալը»:

Ուրեմն այս տուեալներուն գիտութեամբ պարտ ենք նկատողութեան առնել յաջորդ գլուխին մէջ ներկայացուած տեղեկութիւնը:





ԵՈՒՆՈՒՍ ԷՄՐԷ

ԳԻՏՈՒԹԻՒՆ՝ ԳԻՏԱՆԱԼ Է.
ՃՇՄԱՐԻՏ ԳԻՏՈՒԹԻՒՆ՝
ԻՆՔՆԱԳԻՏԱՆԱԼ Է
ԵՅԷ մԱՐԴ ԻՆՔՉԻՆ ԶԳԻՏԱՆԱԼ
ԳԻՏՅԱԾԸ ԻՆՉ ՕԳՈՒՏ
Կ՝ՈՒՆԵՆԱԼ:



(ՍԷՐ ԱՌ ԱՍՏՈՒԾ)

ՍԷՐԴ զԻս խլեց յոյնիսկ ինձմէ
Յանկամ ըլլալ անբաժան քեզմէ
Օր ու գիշեր սիրոյդ Համար կու լամ
Միայն ու միայն քեզ է որ կը տենչամ:

Ո՛չ կեանքն է ինձ Համար գրաւիչ
Ոչ ալ մահը ամենեւին վրոպկիչ
Միայն քո սէրն է մխիթարիչ
Միայն ու միայն քեզ է որ կը տենչամ:

Թէ որ զիս մեռցնեն
Հետքս անգամ անհետացնեն
Վերադարձի կոչ իսկ գայ Հողէն
Դարձեալ միայն քեզ է որ կը տենչամ:

Սիրահարուած Եռնուա կը կոչուիմ
Ամէն մի օր կը բորբոքի կրակն իմ
Երկրի վրայ, կամ երկինք գտնուիմ
Միայն ու միայն քեզ է որ կը տենչամ:

Ազատ թարգմանութիւն



Ո՞Վ

Ո՞վ եմ ես

Ո՞վ ես դուն,

Պարզ է կարծես

Այս գիտություն:

Պատասխանը յայտնի է

Մեր անունն է որ կ'ըսենք,

Բայց «ի՞նչ է անունը» չէ

Այն Հարցումը որ կը լսենք:

Ես մի բան կը յիշեմ՝

Փրկիտության մը ըսածը,

«Այլ խորհիմ Հատեալբար Եմ»

Կը պատասխանեմ նմանը:

Բոլոր խորհուրդները

Կու գան ու կ'երթան,

Հակառակ ըսուածները

Անոնք չեն յաւերժական:

Կը դժուարանայ Հարցը,

Մեծ շփոթութեան մէջ

Կ'ըսենք մեր արհեստը

Աս ալ չ'ըլլար մի վերջ:

ՃարաՀատ կը խորհինք

Թէ մենք մեր զգացումներն ենք

Բայց Հարցը ետք կու գայ ինք

Յայտնելով թէ մենք անոնք չենք:

Լոյս մը կը ծագի ցարդ-

Եւ մեր մարմինը ցոյց կու տանք:

Ներքին ձայնը կ'ըսէ «Ո՞վ մարդ,

Խորհէ՛ ելլեսոյ տուր պատասխանք»:

Միլիոնաւոր բջիջներ

Կու գան ու կ'երթան ամէն օր,

Փոփոխութեան կ'ենթարկուէր

Այդ մարմինը նաեւ Հզօր:

Պարզ չէ եղեր այս գիտություն

Պատասխանը այդ Հարցումին,

Ան կը գրաւէ մեր ետմին

Կ'ըլլայ զբաղմունքը մեր մտքին:

Ո՞վ է գիտակից մեր խորհուրդին

Եւ թափանցած մեր մարմնին,

Ականատես մեր զբաղումին,

Որ է Հասարակ բոլորին:

Գիտակցութիւնն է ան

Ամէն մի ողջ էակին,

Որ է միշտ անապական

Այդ Լոյսը Աստուածային:

Կեանքն է ան ամէն անՀատի

Անմահ Կեանքը Քրիստոսի:

Ուստի պատասխանն է Հարցումի

«Ան եմ ես, Ան ես դուն» երանելի:

Վ.Ս.



Ե

ՄԱՀՈՒԱՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆԸ



ՄԱՀՈՒԱՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆԸ

Այս գլուխին մէջ ամփոփուած կերպով Բժշ. Փէրրի Վիլսոնի (Perry Wilson) գրութեան պարունակութիւնը պիտի ներկայացուի: Ան ուսումնասիրած է մահուան ընթացքին մարդուն բնախօսութեան հետ ունեցած առնչութիւնը՝ ազդեցութիւնը: Այս ուղղութեամբ, իր հետաքրքրութեանը պատճառը փաստել է թէ ամէն ինչ պարզապէս ուղեղային գործառնութիւններ են ներառեալ մարդուն գիտակցութիւնը եւ գիտակցութիւնը Աստուածմէ տրուած չհնորք մը չէ, այսինքն Աստուածային անհուն գիտակցութեան փոքր մէկ մասնիկը չէ արտայայտուած ու յայտնաբերուած մարդու ուղեղին միջոցաւ: Ան նաեւ որոշ հիւանդներ կը յիշէ, որ մեռնելէ յետոյ բժիշկները յաջողած են զիրենք վերակենդանացնել: Անոնց ունեցած փորձառութիւններուն երեք գլխաւորները, որոնք աւելի հասարակաց կը թուին ըլլալ, են. ա- մարմինէն դուրս գտնուելու փորձառութիւնը, բ- անհուն խաղաղութեան զգացումը եւ գ- փապուղիի (tunnel) մը վերջաւորութեան լոյս մը տեսնելը: Իմ հիւանդներէս մին ալ 70 տարեկան կին մը, որուն սիրտը կեցած էր եւ յաջողած էինք զինք վերակենդանացնել, սոսկալիօրէն բարկացաւ, որ զինք «ետբերած» էինք: Երբ իրեն հարցուցի, թէ «մահուան» ընթացքին փորձառութիւնը ի՞նչ եղած էր: Ան պատասխանեց ըսելով, թէ հիանալի պայծառութիւն ունեցող զանազան գոյներ տեսած էր, որ կարելի չէր հոս աշխարհի վրայ այդ գեղեցկութիւնը տեսնել, նոյնիսկ՝ երեւակայել:


Բժիշկը չորս հիւանդներու ընտանեկան անդամներէն անոնց ելեկտրաուղեղագիծերը (EEG-electrencephalogram) արձանագրելու հրամանը առած է : Հիւանդներէն երեքը իրենց սիրտերուն կենալուն հետեւանք

մահացած էին: Բժիշկները երկարատեւ աշխատանքէ վերջ յաջողած էին սիրտերը դարձեալ աշխատցնել եւ անհատները վերականգնականացնել: Բայց դժբախտաբար երկարատեւ թթուածինի պակասութեան հետեւանք անոնց ուղեղները վնասուած մնալուն թմբիրի մէջ էին եւ արուեստական միջոցներով գիրենք կ'ապրեցնէին: Իսկ չորրորդն ալ ուղեղային արիւնահոսութեան հետեւանք թմբիրի մէջ էր եւ ենթակայ նոյն կացութեան միւս երեքին նման:

Ուղեղային արձանագրութիւնը սկսելէ մօտաւորապէս երեք ժամ յետոյ արուեստական շնչառութեան մեքենան դադրեցուցած են: Մօտաւորապէս 9-էն 10 վայրկեան առած է, որ անհատը վերջնականապէս մահանայ: Նշմարած են, որ մահէն հինգ վայրկեան առաջ յանկարծակի կամա (γ) ալիքներու խուժում մը գոյացած է: Հետաքրքրականը այն է թէ ուղեղին գիտակից փորձառութիւններ տուող մասերուն մէջ եղած է այդ գործառնութիւնը: Ըստ հեղինակին, ողջ անհատներու մէջ ալ նման արձանագրութիւններ եղած են: Ան նաեւ կ'աւելցնէ, թէ մարմինէ դուրս ըլլալու փորձառութիւնն ալ նման գործունէութիւն ցոյց կու տայ: Ինք վստահ է, թէ այդ արձանագրութիւնը մեռնող ուղեղի մը յայտնաբերած ելեկտրական քառասային արտայայտութիւն մը է:

Հետեւեալը արձանագրուածին պատկերն է:

EEG Power at Various Frequencies



Այս նկարին մէջ կը տեսնենք ուղեղին գործունէութիւնը: Կարեւորը կարմիր գոյնն է: Առաջին մասին մէջ (S1) շատ ցած գործունէութիւն մը գոյուլթիւն ունի: Ուղեղը ամբողջովին մեռած չէ: Նման արձանագրում շարունակած է մօտաւորապէս 2 ժամ ու 45 վայրկեան: Առաջին եւ երկրորդ մասին (S2) միջեւ փոքր ընդհատումը կը ներկայացնէ շնչառութեան մեքենան գործելէ դադարեցնել: Առանց շնչառութեան, հետեւաբար առանց թթուածինի, թէ՛ ուղեղը եւ թէ՛ ալ սիրտը կամաց-կամաց գործելէ կը դադրին: Մօտաւորապէս չորս վայրկեան յետոյ եօթերորդ մասին մէջ (S7) կը տեսնուի բարձր յաճախականութեամբ (մինչեւ 200Hz) ուղեղային գործառնութիւն: Իսկ 9-երորդ (S9) մասին մէջ կարմիր մասը կը նուազի եւ (S10)-ի մէջ ալ վերջնականապէս կ'անհետանայ ու անհատն ալ կը մեռնի:

Կը ճանչնամ անհատ մը, որ դժբախտութիւնը ունեցած է ինքնաշարժի արկածի ենթարկուիլ, բայց նաեւ բարեբախտութիւնը չմեռնելու: Ինք ըսած է, թէ ճիշդ արկածին ամենավատ միջոցին իր ընդհանուր կեանքը շարժանկարի ժապաւէնի մը նման իր աչքերուն առջեւն անցած է: Վերեւ արձանագրուած ուղեղային գործառնութեան համաձայն կը թուի թէ մարդուն անհատականութեան իր մարմնին հետ ունեցած կապը երբ կը սկսի խզուիլ, մարմնին անհատին յայտնաբերած գիտակցութեան վրայ ունեցած սահմանափակումն ալ կ'անհետանայ եւ գիտակցութիւնը աւելի բարձր որակով կը յայտնուի մտքին միջոցաւ մինչեւ որ միտքն ալ մահանայ: Իսկ երբ միտքն ալ մահանայ շատ հաւանական է որ ոգին անհուն գիտակցութեան եւ հարկաւ անոր տուած փորձառութեամբ ձշմարտութեան կը գիտակցի: Իր Ֆիզիքական կեանքի միջոցին, իր «Ես»-ին դրդումներուն հետեւանք թէ՛ ունեցած եւ թէ՛ ալ կատարած ժխտական խորհուրդ, խօսք ու արարքներուն

համար կը զղջայ: Ինք Քրիստոս իր կեանքին միջոցին իր մէջ չյայտնաբերելուն համար, իր կեանքին բուն նպատակը չկատարելուն համար, վատնած կեանքին համար կը զղջայ: Հայր Աստուած ներողամիտ է ու «բազուկները» բաց զինք կ'ընդունի: Հետեւաբար ինչո՞ւ երանութեան մէջ չ'ըլլայ: Ան պայծառ ըմբռնումի՝ վեհ հասկացողութեան եւ յաւիտենականութեան փորձառութիւնը կ'ունենայ: Իր կենցաղը փոխելու, Ս. Հոգիին դէմ գործած աններելի մեղքերուն պարտքերը վճարելու ու դրական բարեշրջման համար, անգամ մը եւս վերամարմնանալ կ'որոշէ պատշաճ ցեղ, վայր ու ծնողաց, որ պարտքերը «վճարելու» համար յարմար կ'ըլլան եւ ահա՛ աս է տարբերակ ծնունդներու պատճառը: Դժբախտաբար վերամարմնանալը անգամ մը եւս կը սահմանաբակէ իր յայտնաբերած գիտակցութեան մակարդակը եւ իր Ֆիզիքական մարմնին մէջ ան չի յիշեր իր առած որոշումը եւ իր կեանքի վատ պատահարներով պարտքերը վճարելով հանդերձ նոր պարտքեր կը ստեղծէ: Վերամարմնացման «անիւը կը դառնայ մինչեւ որ բարեշրջումը յառաջանայ եւ ինք իր «Ես»-ին յաղթէ ու Քրիստոս իր մէջ յայտնաբերէ: Այն ատեն առանց «Ես»-ին ստեղծած խորհուրդ ու զգացումներու անհատն ալ «սուրբ սիրտ» կ'ունենայ եւ կը յաջողի Քրիստոս, որ իր ձգձարիտ էութիւնն է, իր մէջ յայտնաբերել: Ան ինչ որ Յիսուս ըրաւ եւ մեզի ալ պատուիրեց նոյնը ընել՝ Իրեն նմանիլ: Այն ատեն այլեւս առանց «Ես»-ին դրդումներուն «պարտք» ալ չի չիներ եւ վերամարմնանալու պէտքն ալ չի զգար, Քրիստոս ալ իր անհատականութեան յարուսթիւն կու տայ եւ անհատն ալ Քրիստոսի մէջ «լուծուած» յաւիտենական կեանքի մէջ երանութեամբ կը գոյատեւէ:

«Որ յաղէ՛ն՝ արարից ցնա սիւն Կաճարի Լա-

րո-ժոյ իմոյ, եւ արհաւիս ալ մի եւս ելցէ՛ եւ

Գրեցից 'ի վերայ նորա պանուն Նադոթոյ իմոյ,
...» : (Յայրենո-թիւն Գ:12)

«Ան որ կը յաղթէ, գանիկա իմ Աստուծոյ տաճարին
մէջ սին մը պիտի ընեմ ու ալ դուրս պիտի չելլէ:
Անոր վրայ իմ Աստուծոյ անունը պիտի գրեմ ...»:



«Հուսաւորուելու Համար կայ բան մը որ կրնամ ընէլ:»

«Այն ինչ որ կրնաս ընել որպէսզի արեւը առաւօտուն
ծագի:»

«Ուրեմն Հոգեւոր «մարզանքները» որ կը պատուիրես ի՞նչ
օգուտ ունին»:

«Վստահ ըլլալու Համար, որ երբ արեւածագը գայ, դուն
քունի մէջ չ'ըլլաս:»



ՀՐԱԺԵՇՏԸ

Երբ ես հոսկե այլեւս մեկնիմ
Աս ըլլայ Հրաժեշտի խօսքն իմ

Ան որ տեսայ, է Անգերազանցելին
Համոտեսեցի թափուն Հիվթը այս ծաղիկին
Որ ծղած է մէջ Լոյսի ուլկիանոսին
Արժանացայ այս Աստուածային օրհնութիւնին
Աս ըլլայ խօսքը իմ Հրաժեշտին:

Այս բեմադրութեան մէջ իր անհամար ձեւերով
Ես ալ մասնակցեցայ յատուկ խաղս խաղալով
Եւ հրճուեցայ այն Անտեսանելին տեսնելով
Եւ ամբողջ մարմինս իր բոլոր անդամներով
Սարսուռ մը զգաց Անդաշէլին հպումով:

Եթէ գալիք է, թող Հիմա գայ վերջն իմ
Եւ աս ըլլայ Հրաժեշտի խօսքն իմ:

Թափոր

(Ազատ թարգմանութիւն)

ՎԵՐՁԱԲԱՆ

Մարդ ինչո՞ւ մահէն կը վախնայ: Անոնք, որոնք մահը իբր վերջակէտ կը տեսնեն, հարկ է որ որոշ անձկութիւն մը զգան եւ մտահոգ ըլլան: Որովհետեւ մարդ իր անհատականութեան՝ «Ես»ին հետ նոյնացած է, կը կարծէ թէ իր «Ես»ին մահով ինք ալ կը վերջանայ: Ընդհանուր առմամբ բոլորս ալ մեր աշխարհիկ ինչքերուն հետ՝ ստացուածք, դրամ, հող, չէնքեր, գոյքեր, ինչպէս նաեւ ընտանիք՝ կին կամ ամուսին, զաւակներ, բարեկամներ, գործ եւ պատասխանատուութիւններ ..., կապ մը հաստատած ենք եւ ասոնցմէ բաժնուելու գաղափարը անձկութեան եւ հետեւաբար վախի պատճառ կ'ըլլայ:

Արդեօք կա՞ն անձեր որ երբ գիշերը քնանալու համար անկողին մտնեն կը սկսին քունէն վախնալ: Չեմ կարծեր: Ընդհակառակը անքնութենէ կը վախնան եւ որպէսզի քնանան նոյնիսկ դեղ կ'առնեն: Բնաւ ուշադրութիւն ըրա՞ծ էք կամ խորհա՞ծ էք, խորունկ քունի պահերը, մեր ամենահանգիստ եւ հանդարտեցուցիչ ժամերն են, որովհետեւ կազդուրուած եւ լաւ տրամադրութեամբ կ'արթննանք: Դարձեալ, երբ խորունկ քունի մէջ ենք, աշխարհի հետ մեր ունեցած բոլոր կապերը կը խզուին: Ոչ ընտանեկան անդամներէն լուր կ'ունենանք եւ ոչ ալ մեր հարստութենէն, պարտքերէն կամ պարտականութիւններէն: Խորունկ քունի մէջ ժամանակն ալ գոյութիւն չ'ունենար: Երբ կ'արթննանք չենք գիտեր թէ որքան քնացած ենք, որով արեւին կամ ժամացոյցին նայելով զայն կը ճշդենք: Հետեւաբար խորունկ քունի մէջ մենք այս աշխարհին համար մեռած չե՞նք: Վստահաբար շատեր պիտի ըսեն թէ գիտեն թէ առաւօտուն դարձեալ պիտի արթննան: Այս գիտութիւնն է որ քնանալու վախը կը փարատէ:

Բայց կան անձեր որոնք քնանալէ կը վախնան: Անոնք կը վախնան, որովհետեւ քունի մէջ վախազդու երազներ տեսած ըլլալու փորձառութիւնը ունին: Հետեւաբար քունի մէջ խորունկ քունի մակարդակէ զատ երազի մակարդակ մը եւս կայ: Երազները կրնան ուրախ եւ հաճելի ըլլալ, կամ՝ վախազդու: Գիտունները կ'ըսեն թէ մարդիկ քունի մէջ կ'երազեն, բայց երբ կ'արթնան քիչեր իրենց երազները կը յիշեն: Երբ կ'երազենք, միթէ երազին մէջի վայրերը, անձերը եւ պատահածները բոլորն ալ իրական չեն: Վստահաբար շատեր պիտի ըսեն. «Ո՛չ, անոնք միայն երազ են»: Այս պատասխանը զարմանք կը պատճառէ: Եթէ այդ պատասխանը ճիշդ է, մարդ ինչո՞ւ իրողութիւն չեղած բանէ մը վախնայ: Ենթադրենք, որ երազիս մէջ, անտառը, գիս փարատելու եւ ուտելու համար հետապնդող վագրէ մը վազելով կը փախչիմ: Ճամբաս յանկարծ ձորի մը առջեւ կը վերջանայ: Վարը կոկորդիլոսներով լեցուն գետ մը կը տեսնեմ: Մէկ վար կը նայիմ եւ մէկ ալ ետեւէս մօտեցող վագրին: Կ'որոշեմ ջուր ցառալ: Ճիշդ երբ ինքզինքս վար կը նետեմ, անկողինէն իյնալով կ'արթննամ: Թէ՛ անկողինին սաւանը եւ թէ բոլոր հագուածներս քրտինքէս թափ-թաց եղած էին: Յոգնութեան եւ վախին յառաջ բերած սրտի բաբախումէն կուրծքս կը հեւար եւ սրտիս զարկին ձայները լսելի դարձած էին: Աստուծոյ փառք տուի որ տեսածս միայն երազ էր: Երազը իրողութիւն մը չէ, այլ՝ միայն պատրանք մը: Ուրեմն ես ինչո՞ւ իրողութիւն չեղած կացութենէ մը վախցայ: Տարակոյս չկայ որ վախցայ: Հեւալս, սրտի բաբախումս, քրտինքս եւ նոյնիսկ անկողինէս վար ցառալս՝ իյնալս բոլորն ալ փաստեր են, թէ երազիս մէջ բոլորն ալ ճշմարտութիւն էին: Երբ գիտակցութեան մակարդակս երազի մակարդակէն «արթնութեան» մակարդակի բարձրա-

ցաւ, այդ բոլորին իրականութիւն չըլլալը, այլ երազ մը ըլլալը միայն այն ատեն հասկցայ: Ան որ արթուն գիտակցութեան մակարդակ կը համարենք նաեւ երազի տարբեր մակարդակ մըն է եւ ոչ իրողութիւն է եւ ոչ ալ ճշմարտութիւն: Ինչպէս երբ երազէն արթննանք, երազին մէջի բոլոր լաւ ու վատ պատահարները երկվայրկեանապէս կ'անհետանան եւ անոնց համար չենք տիրիր, այլ կ'ըսենք. «Հոգ չէ, միայն երազ մըն էր», նմանապէս երբ մահը գայ կացութիւնը նոյնն է: Ան որ կը թուի փորձառութիւններով լի երկար կեանք մը ըլլալ, պիտի տեսնենք որ շատ կարճ ժամանակ մը տեւած է: Գիտուններն ալ երազներուն համար նոյնը չեն^օ ըսեր: Այն երազը որ կը կարծենք թէ տարիներ տեւած է, իսկութեան մէջ մէկ կամ երկու վայրկեան տեւողութիւն ունեցած է: Մեր արթուն կոչած այս կեանքն ալ իր բոլոր հաճոյքներով եւ դառնութիւններով, ճոխութիւններով եւ թշուառութիւններով նոյնպէս երազ մըն է եւ ոչ ճշմարտութիւն: Եթէ երազիս մէջ մէկը ինծի «Մի վազեր, վազը իրական չէ» ըսէր, արդեօք մտիկ պիտի ընէի^օ: Չեմ կարծեր, բայց սխալս ըսուածը մտիկ չընելս պիտի ըլլար եւ ոչ թէ վախնալս: Բարեբախտաբար երազիս մէջ մէկը ինծի ճշմարտութիւնը չըսաւ, հետեւաբար ինքզինքս սխալած չեմ համարեր:

Յիսուսի նման վարդապետ մը ունենալու բարեբախտութիւնը ունինք: Ինք յաջողեցաւ իր գիտակցութեան մակարդակը բարձրացնել եւ հասկնալ, թէ այս աշխարհը միայն երազ մըն է եւ ուզեց այդ իրողութիւնը մեզի սորվեցնել: Հետեւեալ համարները ցոյց կու տան թէ Իր գիտակցութեան մակարդակը եւ մեր գիտակցութեան մակարդակները նոյնը չէին: Հետեւաբար մահը իրեն համար վերջաւորութիւն մը չէր ներկայացներ եւ յօժարաբար դէպի խաչ գնաց:

«Ես եւ Լայր իմ մի եմէ» : (Յովհաննէս Ժ:30)

«Ես եւ Հայրը մէկ ենք»:

«... ես՝ չեմ յայտնում աշխարհէ» : (Յովհաննէս Լ:23)

«... ես աս աշխարհէն չեմ»:

«Ես ասեցնուաւ. Դուք՝ ի ներշնչուող

աստի եղ, եւ ես՝ ի վերջնապէս անտի եմ.

Դուք՝ յաշխարհէ՛ր աստի եղ եւ՝ չեմ յայտնում

աշխարհէ» : (Յովհաննէս Լ:23)

«Ըստ անոնց. «Դուք վարէն էք՝ ես վերէն եմ. դուք այս աշխարհէն էք՝ ես այս աշխարհէն չեմ»:

Ինչպէս Յիսուս յաջողեցաւ, մենք ալ հետեւելով Իրեն, կրնանք մեր գիտակցութեան մակարդակը բարձրացնել եւ ներկայ երազին վերջ տալ: Ի՞նչ բան մեր երազներուն վերջ կու տայ. արթննալը կամ խոր քունի մուտքը: Երկուքն ալ գիտակցութեան մակարդակի փոփոխութիւն կը ներկայացնեն, մէկը դէպի «վեր», իսկ միւսն ալ դէպի «վար»: Կացութիւնը մեր այս «արթուն» կոչած գիտակցութեան մակարդակին համար ալ նոյնն է: Մեր այս «աշխարհիկ կեանք» կոչած երազը, «խորունկ քուն»ի մէջ մտնելով կրնայ վերջ գտնել: Բայց այս «խորունկ քուն»ին գիտակցութեան մակարդակը շատ ավելի ցած է, քան մեր առօրեայ խորունկ քունինը: Մարդիկ գիտակցութեան մակարդակը շատ ավելի ցած այս «խորունկ քուն»ը «մահ» կոչած են: Հոգին ամբողջովին մարմինէն քաշուած, մարմինն ալ այլեւս առանց հոգիին շնորհած կենսատու զօրութեան չի կրնար գոյատեւել: Մեր նախահայրերը այս իրողութիւնը լաւ գիտնալով «մեռեալները» ննջեցեալ կոչած են, որ քնացող կը նշանակէ: Նաեւ կարելի է այս «երազէն»՝ այսինքն մեր արթուն կոչած գիտակցութեան մակարդակէն ավելի բարձր գիտակցութեան

մակարդակի մը հասնելով արթննալ եւ նոյնիսկ մարմինէն գիտակցաբար եւ ուզելով հեռանալ:

Գիշերուան խորունկ քունը ինչո՞ւ համար թէ հաճելի է եւ թէ մեզ կը կազդուրէ: Ինչպէս վերեւ մատնանշեցինք երբ քունի մէջ ենք աշխարհի հետ մեր բոլոր կապերը կը խզենք: Ամէն ինչ որ առարկայական է կ'անհետանայ: Բոլոր առարկայականները ճշմարտութիւն չեն եւ պատրանքային են, ներառեալ մեր «Ես»ը: Հետեւաբար խորունկ քունի մէջ մեր «Ես»ին հետ մեր նոյնացումն ալ վերջ կը գտնէ: Երբ բոլոր առարկայական պատրանքայինները կ'անհետանան, միայն ճշմարտութիւնը կը մնայ, որ է մեր ներքին Քրիստոսը՝ բոլոր զօրութեանց ալը, որով կազդուրուած կ'արթննանք, ինչ որ պէտք է զարմանք պատճառէ: Միթէ մահն ալ նոյնը չէ՞: Ան ալ աւելի խորունկ քունի մակարդակ մը չէ՞: Սովորական խորունկ քունի միջոցին մեր հոգիին հետ կը նոյնանանք, իսկ մահուան խորունկ քունին մէջ ալ մեր հոգին Ս. Հոգիին հետ կը նոյնանայ: Ինչո՞ւ վախնանք մահէն, երբ այդ խորունկ քունէն դարձեալ արթննանք շատ աւելի հանգչած եւ կազդուրուած պիտի ըլլանք: Հարկաւ այսպէս կարելի է խորհիլ եթէ նոյնացած ենք մեր հոգիին՝ Քրիստոսի հետ: Բայց եթէ նոյնացած ենք մեր «Ես»ին հետ, այն ատեն է որ մահը սոսկում կը պատճառէ, որովհետեւ «Ես»ը մեղաւոր է եւ ըստ հետեւեալ համարին դատապարտուած է մահուան:

«Զի Խոշակն մեղաց մահ է.» (Հռոմայեցիս 9:23)

«Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է»

Եթէ մեր գիտակցութեան մակարդակի բարձրացումով այս աշխարհի մէջ «աշխարհիկ կենցաղ»ին վերջ տանք, ինչպէս Յիսուս յաջողեցաւ ընել, մենք ալ փրկութեամբ կարելի է պարգեւատրուինք, որ անհատականութիւնը պահել է: Ապա թէ ոչ մեր անհատականութիւնն ալ մարմնին մահուան հետ կ'անհետանայ եւ կը մեռնի:

Ուրեմն մահը պէտք է մեզ խրտչեցնէ: Մահը «տուն»՝ մեր յաւիտենական տունը վերադառնալ է: Անբոլոր դժուարութիւններու, չարչարանքներու, հարցերու, խռովութիւններու, անհամաձայնութիւններու, տառապանքներու, դժբախտութիւններու, երկսայրութիւններու եւ հիւանդութիւններու վերջ կու տայ: Մահը ծերացած եւ յոգնած մարմինը, որ հոգիին այլեւս ծառայելու կարողութիւնը չունի, իր լուծէն ազատ կ'արձակէ: Ան հոգիին հանգիստի միջոցն է: Ան ճամբորդութեան մը իր թիրախին հասնիլն է: Մարմինը միայն հոգիին կառքն է՝ այդ թիրախին հասնելու ճամբորդութեան միջոցը: Հոգիին ճամբորդութեան սկիզբը մարմնին ծնունդն է, իսկ վերջաւորութիւնն ալ՝ մահը: Երբ կը ճամբորդենք եւ նպատակակէտին հասնինք, մեր փոխադրական միջոցը ետին թողելով չե՞նք մեկնիր:

Ի՞նչ պէտք է ըլլանք: Ըլլանք հոգի՞ մը, որ մարմինը կը գործածէ, թէ ոչ մարմին՞ մը, որ հոգին կը գործածէ: Ի՞նչ կը խորհինք: Եթէ առաջինը ընտրենք մահէն պիտի չվախնանք, որովհետեւ գիտենք թէ հոգին անմահ է: Միթէ մեր հինցած վերարկուն կամ ինքնաշարժը չե՞նք փոխեր եւ նորը չե՞նք առներ: Բայց եթէ երկրորդը զատենք, մահը մեզի պէտք է սոսկում պատճառէ:


Երբ կ'երազենք, երազները հաճելի կամ վախազդու կ'ըլլան: Եթէ պիտի երազենք միշտ կը փափաքինք հաճելի քան թէ վախազդու երազներ տեսնել: Այս մեր արթուն կոչեալ կեանքը, որ երազ մըն է, կրնայ հաճելի կամ վախազդու ըլլալ: Աս ալ մեր կենցաղէն կախեալ կը թուի ըլլալ: Մահէն ոչ ոք պէտք է վախնայ: Բոլոր ստեղծագործութիւնը՝ տիեզերքը մահուան ենթակայ է: Նոյնիսկ աստղեր, աստղախումբեր կը ծնին եւ կը մեռնին: Միայն Աստուած անմահ է

*Եւ յաւիտենական: Եթէ չենք ուզեր մեռնիլ պարտ ենք
Յիսուսի նման Աստուածայայտնութիւնը մեր մէջ
իրականացնել: Յիսուս ըսաւ, թէ մենք ալ այդ
կարողութեան տէր ենք:*

Լամբարները պարբեր են,
սակայն լոյսը ճոյնն է:
~Դոմինիկ



ԿԵԱՆՔԻ ՎԵՅ ԿԱՐԵԿՈՐ ՈՒՊԴԵՅՈՂՅԱՆԵՐԸ



- 1- Երբ մեռաւ ես, ուժարիւր եղիւր ԽՈՐՀՈՐԴՆԵՐՈՒԴ
- 2- Երբ բարեկամներու շէտ ես, ուժարիւր եղիւր ԽՍԱՔԵՐՈՒԴ
- 3- Երբ բարկացա՞ծ ես, ջալիւ կ'իլլի
- 4- Երբ ապրուիւ մէջ ես, ուժարիւր եղիւր ՎԱՐՔԻՒ
- 5- Երբ դժուարութեան մէջ ես, սաւաշէ ՉԳԱՅՈՒՄՆԵՐԻ
- 6- Երբ Աստուծո՞ւ սպառնալով օղջնալ, սաւաշէ «Ես»-ի



-2-

ՅԱԲԵԼՈՒԾԱԿԱՆ

*

Ա - ՀԱՄԱՆԻՆ ՉՈՐԱ ՕՐԷՐԱԵՐԸ

Բ - ԱՆՀԱԽՏԱ ՈՒ ՀԱԽՏԱԽՈՐԸ



ՀԱՄԱՆԻՆ ՉՈՐՍ ՕՐԷՆՔՆԵՐԸ

Առաջինը կ'ըսէ.

«Անձը որ կուգայ ու մեր ապրումներուն մաս կը կազմէ, ան ճիշդ անձն է:» Սա կը նշանակէ, թէ ոչ ոք մեր ապրումներուն պատահաբար մաս կը կազմէ, բոլոր անոնք, որոնք կը շրջապատեն մեզ, որոնք մեր վրայ կ'ազդեն, պատճառով մը հոն են: Որպէսզի մենք բան մը տորվինք ու յառաջանանք:

Երկրորդ օրենքը կ'ըսէ.

«Ինչ որ կը պատահի միակ բանն է որ կրնար պատահիլ»: Ոչինչ, բայց ոչինչ, որ կը պատահի մեզի մեր կեանքի ընթացքին կրնար տարբեր ըլլալ: Նոյնիսկ ամենէն անկարելորդ մանրամասնութիւնը: «Եթէ ես այսպէս ըրած ըլլայի ուրիշ բան մը կրնար պատահիլ»: ըսուած բանը չկայ: Ինչ որ պատահեցաւ միակ ձեւն էր որ կրնար պատահիլ եւ այդպէս էր որ պատահեցաւ որպէսզի դասը առնէինք ու մեր կեանքը շարունակէինք: Իւրաքանչիւր եւ ամէն մէկ կացութիւն որ կը պատահի մեզի մեր կեանքի տեւողութեան կատարեալ է, նոյնիսկ մեր միտքը եւ մեր «ես»ը ընդդիմանան եւ չուզեն զայն ընդունիլ:

Երրորդը կ'ըսէ.


«Որեւէ ատեն որ սկսիս ճիշդ ժամանակն է»: Ամէն բան կը սկսի ճիշդ ժամանակին, ոչ առաջ, ոչ յետոյ: Երբ մենք պատրաստ ենք նոր բանի մը սկսելու մեր կեանքին ընթացքին, հոն է որ ան պիտի սկսի:

Չորրորդը ու վերջինը.

«Երբ բան մը կը վերջանայ, կը վերջանայ»: Ճիշդ այդպէս: Մեր կեանքի տեւողութեան եթէ բան մը վերջացաւ, մեր բարեշրջումին համար է, հետեւաբար պէտք չէ հետապնդել: Պէտք է յառաջանալ այդ փորձառութեամբ հարստացած յառաջդիմել:

Կը խորիմ որ պատահեամբ չէք կարդար այս տողերը:

**Եթէ այս տողերը այսօր մեզի ներկայացուեցան,
որովհետեւ մենք պատրաստուած ենք հասկնալու, թէ
ոչ մէկ ձիւնափաթիլ կրնայ սխալ տեղ իյնալ:**



Քեզմէ դուրս ոչինչ բան կարող է քեզ նեղել:
Դուն ես որ այդ ալիքները՝ զգացումները
քու մարմնիդ մէջ կը յառաջացնես:
Եթէ միաբքդ ազատ թողուս
ան ալ հանդարտ կը մնայ:

Շունրեա Սուգուքի

ԱՆՀԱՒԱՏԸ ու ՀԱՒԱՏԱԲՈՐԸ

ԱՐԵՒԻԿ ՊԱՊԱԵԱՆ

Հետաքրքրական է, թե մարդ ինչպե՞ս կրնայ ապրիլ առանց հաւատքի: Ջոր օրինակ, անհաւատները ինչպե՞ս կ'ապրին առանց Աստուծոյ: Անոնք կը մերժեն Տիրոջ գոյութիւնը: Մեր մոլորակի տէրը կը ճանչնան մարդը: Գիտութեան զարգացումով կու տան այս կամ այն իրավիճակի բացատրութիւնը:

Անհաւատը կը հաւատայ միմիայն իր տեսածին ու շօշափածին: Իսկ Տէրը մենք՝ մահկանացուներս անգոր ենք տեսնելու:

Անհաւատը քամին նոյնպէս չէ տեսած, սակայն կը հաւատայ անոր գոյութեան: Հաւատքը նոյնպէս զգալով է. «Երանի անոնց, որոնք չեն տեսած, սակայն կը հաւատան», այս մեր Տէր Յիսուս Քրիստոսի խօսքերն են: Թէեւ անհաւատութիւնն ու հաւատաւոր ըլլալը միշտ ալ ենթակայական են, սակայն այսօր յիշեցի անհաւատներուն ու անոնց հետ կապուած քանի մը պատմութիւն:

Աղքատ ընտանիքի մը մայրը խոր հաւատացեալ էր:

Անդամ մը, երբ այլեւս երեխաները կերակրելու համար սնունդ չկար, կիներ հեռաձայնեց ձայնասփիւռի ընկերութեան եւ աղաչեց, որ եթէր հեռարձակեն Տիրոջ ուղղուած իր խնդրանքը:

Ձայնասփիւռի աշխատակիցները ըմբռնելով մօտեցան աղքատ կնոջ խնդրանքին ու հմերժեցին:

Սակայն ձայնասփիւռի ունկնդիրներէն մէկուն խիստ վրդովեցուց այս հաղորդումը: Ան անհաւատ մըն էր ու որոշեց քիչ մը զուարճանալ՝ ծաղրանքի ենթարկելով աղքատ կիներ: Ան սորվեցաւ այդ կնոջ հասցէն: Այնուհետեւ իր քարտուղարուհիին յանձնարարեց երթալ խանութ ու առատօրէն գնել ամենալաւ մթերքը:

Քարտուղարուհին վերադարձաւ եւ իր հետ բերաւ

լաւագոյն մսեղէնը, պանրեղէնը, քաղցրեղէնն ու նպարեղէնը: Սակայն որչափ մեծ եղաւ անոր զարմանքը, երբ տնօրէնը անոր յանձնարարեց այս բոլորը յանձնել աղքատ կնոջ:

-Երբ կիներ հարցնէ, թէ ո՞վ ղրկած է այս մթերքը, - կ'ըսես՝ սատանան, - պատուիրեց տնօրէնը:

Քարտուղարուհին ամբողջ մթերքը հասցուց կնոջ տունը: Հաւատաւոր կիներ երկար ատեն տամուկ աչքերով շնորհակալութիւն կը յայտնէր ու կ'օրհնէր քարտուղարուհիին, բայց երբ ան կ'ուզէր հրաժեշտ տալ, հարցուց.

-Իսկ չէ՞ք ցանկար գիտնալ, թէ ո՞վ ղրկած է այս բոլորը:

- Ո՛չ, ի՞նչ կարելորութիւն ունի: Երբ Աստուած հրաման մը կ'արձակէ, սատանան անգամ կ'ենթարկուի:

Անհաւատ մը տարեց կնոջ մը կը վստահեցնէր, թէ Աստուած չկայ:

-Մեծ մայր, ախր կրնաս հաւատալ Աստուծոյ: Մենք այլեւս եղանք տիեզերքի մէջ, եւ այնտեղ անգամ չհանդիպեցանք Աստուծոյ: Գետերու հուները փոխեցինք՝ նորէն զԱստուած չտեսանք:

Իսկ մեծ մայրը անոր կը պատասխանէ.

-Իսկ դուք գիտէ՞ք, թէ տղամարդոց պէիւերը ինչո՞ւ կ'աճին, իսկ կանանցը՝ ոչ:

Անհաւատը չփութահար կը լռէ, այնուհետեւ կը պատասխանէ.

-Չեմ գիտեր:

Իսկ տատիկը անոնց կ'ըսէ.

-Դէ՛հ, եթէ չէք գիտեր, թէ ձեր քիթին տակ ինչ կը կատարուի, ինչո՞ւ կ'երթաք դէպի տիեզերք:

Երեւան

**ՏԷՐ ՀՈՎՈՒՆԱԾԷ ԶԻԱ, ԵՒ ԻՆՁ
ԻՆՁ ՈՉ ՊԱԿԱՍԵԱԾԷ:**



**ԹԷՊԷՏ ԵՒ ԳԱԱԾԻՅ ԵՍ Ի ՄԷՉ
ԱՏՈՒԵՐԱԾ ՄԱՀՈՒ, ՈՉ ԵՐԿԵԱՅԺ
Ի ԶԱՐԷ ԶԻ ԴՈՒ ՏԷՐ ԸՆԴ ԻԱ ԵԱ:**

